3929
hunjtpłtG

2h.

280
728-64
1478
3719

3929-ա.
11257
397-ԱՀ
ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A Публичная Библиотека
7/II 1922
Ս. ՍՅՍԼԻՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2004

ԲՐԻՈՏՈՆԷՍ ԿԱՄ

ԱՐԴԵՂԵՏՈՒԹԻՆ

ՀԱՄԱՌՕՏ։

Հաւաքեալ 'ի քրիստոնէական վարդապետութենէ Բելլարմինոսի, և այլոց։

Ի՝. տպագրեալ առ Հնոցեանս
Լեռնահայ վանք վերջին Տառնիանց
ի Սեբաստիա։

Աստուածաշունչ

Տպագրեալ ՅԱՄ Տն 1801։
Ի՝ Խոնարհականութեան Հայոց ոմն։

ԴՈՒՔՍՈՏ։

Ի Տպարանի Մխիթարեանցն Հայոց
Մխիթարեանց։
Հրամանաւ և Արտօնութեամբ
Կայսերաբքայական Հրովարտակին։

1478
28
43
39
Գրադարան
Բաղրամյան

Ասումնասէր՝ մանուկ ուշիմ՝
այսբոր մա տիր։
Յորդոր բանիս՝ արտի մըտօք՝
լեր ունկն դիր։
Ըշ վասըն քո՝ մանկացելոյն՝
զիմաստ ու խիր։
Սբ Հաւատոյ՝ քո խորհըրդոց՝
լեր՝ի խըն դիր։
Օր՝ի յարբունս՝ հասակի քո՝
լեցիս ըն տիր։
Աշակերտեալ՝ արքայութեան՝
երկնից դը պիր։

ԽԱՐՈՒՄՈՑ

Քրիստոնէական վարդապետութեան:

Գլուխ Ա:

Յաղագս Քրիստոնէից անուանեան:

Հարց.
ու ի՞նչ ես:
Պատասխան.
Քրիստոնեայ եմ շնորհօքն Աստի:
Հ. Ի՞նչ բանով քրիստոնեայ ես եղեր:
Պ. Հաւատալով ի Աստ, և մկրտութիւն առ առաքելոյն:

Հ. Քրիստոնէին նշանը ո՞րն է։

Պ. Սէր խաչն է։

Հ. Խաչակնքէ՛ քեզի, որ տեսնեմ։

Պ. ✠ Յանուն Հօր, և Որդւոյ, Հոգւոյն սրբոյ. ամէն։

Հ. Քանի՞ բան պէտք է քրիստոնէին առ՝ի փրկիլ։

Պ. Երս բան պէտք է, թ՝ Հաւատոյ, սէր, և բարեգործութիւն։

Հ. Ո՞րն է Հաւատն քրիստոնէին։

Պ. Այս երկու բանս Հաւատալն է, թ՝ Նախ՝ Հաւատալ, թէ Աստուած մէկ է, և երեք անձ ունի։

Երկրորդ՝ Հաւատալ, թէ Որդին Աստուած մեզի համար մարդ եղաւ, և խաչին վրայ մեռաւ։

Հ. Ո՞ՀԷ բանով կրնանք ստուգիլ աս որ Հաւատքս։

Պ. Հաւատամքին խօսքերովը, զոր Առն տասներկու առաքեալները շարադրեցին, և սրբ ժողովքները ճոխացուցին։

Հ. Ընանկ է նէ, ըսէ զՀաւատամքը, որ տեսնեմ։

պ. Հաւատամք 'ի մի Աստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։ Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Աստուծոյ, ծնեալն յայր Հօրէ միածին, նախ քան զամենայն յաւիտեանս։ Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յայր ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ մարմին, հոգի, միտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Պատրաստ է նովին մարմնովն և փառօք Հօր

՝ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ՝ի սբ Հոգին Յանեղն և ՝ի կատարեալն, որ ՝ի Հօրէ և յՈրդւոյ բղխի։ Որ խօսեցաւ յօրէնս և ՝ի մարգարէս և յաւետարանս. որ եկն ՝ի յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ ՝ի սբսն։ Հաւատամք և ՝ի մի միայն ընդհանրական և յառաքելական սբ Եկեղեցի։ ՝Ի մի մկրտութի. յապաշխարութի. ՝ի քաւութի և ՝ի թողութի մեղաց։ ՝Ի յարութի մեռելոց։ ՝Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց։ Յարքայութին երկնից։ Եւ ՝ի կեանսն յաւիտենականս. Ամէն։

Հ. Ես լսած Հաւատամքիդ ամմէն մէկ խօսքը ի՞նչ ըսել է, գիտե՞ս մի։

Պ. Էկիկ մէկիկ հարցընես նէ, ասլ պատասխանը կրնամ տալ ինձի կէօրէ։ Ընանկ է նէ՝ սկսինք մէկիկ մէկիկ հարցնել։

Պ. Լուսի.

Գլուխ Բ։

Յաղագս Աստուծոյ, թէ ո՞ է Աստուածն։

Հ. Աստուծ ի՞նչ է։

Պ. Մէկ անհուն էակ մի է անմարմին. և ստեղծող երկնի և երկրի և ամենայն բանի։

Հ. Աստուծ ո՞ւր է։

Պ. Ամենայն տեղ է, յա՛ի յերկինս, ՝ի յերկրի, ՝ի դժոխս, և այլ ամենայն տեղ։

Հ. Յերկինս ի՞նչպէս է։

Պ. Մէկ մեծ թագաւորի մի պէս է։

Հ. Յերկրի ի՞նչպէս է։

Պ. Մէկ մեծ առաջնորդի և հօր պէս է։

Հ. Յդժոխս ի՞նչպէս է։

Պ. Մէկ սաստիկ դատաւորի մի պէս է։

Հ. Թէ որ ա՞ծ ամենայն տեղ է, ուրեմն հո՞ս ալ է։

Պ. Իրաւամբ. հո՛ս ալ է։

Հ. Թէ որ հոս է նէ՝ հապա ինչո՞ւ չենք տեսներ զնա։

Պ. Ասոր համար, վասզի անմարմին է, և չերևիր։

Հ. Թեզի՞ ով է ստեղծեր։

Պ. Աստ։

Հ. Ինչո՞ւ համար է ստեղծեր։

Պ. Ասոր համար է ստեղծեր, որ զինքը ճանչնամ, սիրեմ, պաշտեմ, և իւր պատուիրանները պահեմ. և երբ որ մեռնիմ նէ, արքայութիւն երթամ։

Հ. Աստ քանի՞ է։

Պ. Մի միայն է։

Հ. Անձը քանի՞ է։

Պ. Երեք է. որուամ ալ Երրորդութիւն ալ կըսենք։

Հ. Անունները ի՞նչ է։

Պ. Հայր ած. Որդի ած. և Հոգի սրբ ած։

Հ. Հայր ա՞ծ է։

Պ. Իրաւերես, ած է։

Հ. Որդին ա՞ծ է։

Պ. Իրաւերես, ած է։

Հ. Հոգին սրբ ա՞ծ է։

Պ. Իրաւերես, ած է։

Հ. Անանկ է նէ, երեք ած է։

Պ. Դա՛ւ լեցի, երեք անձինք, և մէկ ած է։

Հ. Երեք անձանց ոլորք մեծ է, ոլորք պզտիկ է։

Պ. Երեքնալ հաւասար են. և մեծ ու պզտիկ չիկայ մէջերնին։

Հ. Ինչու՞ համար հաւասար են։

Պ. Որ համար, որ երեքնալ մէկ ած են, և մէկ բնութի, մէկ ածութիւն, մէկ կարողութի, և մէկ իշխանութի ունին։

Հ. Այր ած ուսկի՞ց է։

Պ. Իրմէն է 'ի յաւիտենից. և ուրիշէն չէն։

Հ. Որդին ած ուսկի՞ց է։

Պ. Այ Օրէ ծներ է 'ի յաւիտենից։

Հ. Սուրբն սբ ած ուսկից է։

Պ. Այ Օրէ և Որդուց ելած և բղխած է 'ի յաւիտենից։

Գլուխ Գ.։

Յաղագս Հոգւոյն Սրբոյն աչ։

Հ. Որ երեք անձանց ոլորք մարդ եղաւ, կամ մարմնացաւ։

Պ. Միայն Որդին ած։

Հ. Ինչու՞ համար մարդ եղաւ։

Պ. Անձի սատանային ձեռքէն և 'ի դժոխոց ազատելու համար։

Հ. Մարդ եղաւ ասելը ի՞նչ ասել է։

Պ. Ասել է, թէ Որդին աստ, որ յաւիտենից աստ էր, 'ի ժամանակի եկաւ, մեզի համար մարմին առաւ, և մեզի նման մարդ եղաւ։

Հ. Ուսկի՞ց մարմին առաւ, և մարդ եղաւ։

Պ. 'Ի Մարիամայ սրբ կոյս աստուածածնէն՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ։

Հ. Ո՞ր օր մարդ եղաւ, կամ մարմնացաւ։

Պ. Մարտի ամսոյն՝ իե.ին, աւետման օրը։

Հ. Քանի՞ ամիս մնաց յարգանդի սրբ աստուածածնին։

Պ. Ինն ամիս։

Հ. Ո՞ր օր ծնաւ։

Պ. Դեկտեմբեր ամսոյն՝ իե.ին։

Հ. Ո՞ր տեղ ծնաւ։

Պ. 'Ի Բեթղեհեմ քաղաքի 'ի մսուրն անբանից։

Հ. Անունը ի՞նչ դրին։

պ. Յն. որ յետոյ կոչեցաւ և Ռն։
հ. Յն ասելը ի՞նչ ասել է։
պ. Փրկիչ աշխարհի ասել է։
հ. Ռն ասելը ի՞նչ ասել է։
պ. Ծնեալ այլ ասել է։
հ. Յն Ռն ի՞նչ է։
պ. Կատարեալ աստ է, և կատարեալ մարդ է։
հ. Ինչո՞ւ համար կատարեալ աստ է։
պ. Ասոր համար, վասնզի կատարեալ աստային բնութիւն ունի։
հ. Ինչո՞ւ համար կատարեալ մարդ է։
պ. Ասոր համար, վասնզի կատարեալ մարդկային բնութիւն ունի։
հ. Եթէ մի և նոյն Ռն, կատարեալ աստային բնութիւն ունի, և կատարեալ մարդկային բնութիւն ունի, ուրեմն երկու բնութիւն ունի։
պ. Ամենեսն. թէպէտ մի անձ է, բայց երկու բնութիւն ունի։
հ. Ուսկից ծնաւ մեր Յն Ռն։
պ. Ի Սարիամայ նբ կոյս աստածնէն։
հ. Ինչո՞ւ համար աստածնայ սբ կոյս կըսես։

պ. Ընտր համար կրսեմ. որ սէր ածածինը կոյս մնաց յղացած առենը զՐն. կոյս մնաց ծնած առենը. և կոյս մնաց ծննդենէն ետքը 'ի յաւիտեան։

հ. Ո՞վ է Որի հայրը մարդկութիւն դիէն։

պ. Որ մարդկութիւն դիէն հայր չունի. ինչպէս ածուութեան դիէն ալ մայր չունի. այլ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ յղացաւ 'ի Կանչիամայ սէր կոյս ածածնէն։

հ. Որ տրն մեր քանի՞ տարի ապրեցաւ աշխարքիս վրայ։

պ. Երեսուներեք տարի, և երեք ամիս։

հ. Ընչափ ժամանակը ի՞նչ ըրաւ աշխարքիս վրայ։

պ. Քարոզեց, հրաշքներ գործեց, և ապրայութեան ճամբան՝ բանիւ և գործով մեղի ստրքվրցուց։

հ. Ետքը ի՞նչ եղաւ։

պ. Չարչարուեցաւ. խաչուեցաւ, և մեռաւ մեր փրկութիւնը համար։

հ. Ո՞ր ժամանակ չարչարուեցաւ, և մեռաւ։

պ.

պ. Ի ժամանակս Պիղատոսի դատաւորին. և անոր հրամանաւը խաչեցաւ։

հ. Ո՞ր բնութիւնը խաչեցաւ և մեռաւ։

պ. Մարդկային բնութիւնը, և ոչ աստուածութեամբը։

հ. Ո՞ւր տեղ խաչեցաւ և մեռաւ։

պ. Ի լեառն Գողգոթայ՝ Երուսաղէմ քաղաքին քովը։

հ. Ո՞ն ետքը մարմինը ո՞ւր դրին։

պ. Ի սէր գերեզմանը։

հ. Քանի՞ օր մնաց ի գերեզմանը։

պ. Երեք օր։

հ. Քանի հոգին մեռնելէն ետքը ո՞ւր գնաց։

պ. Գնաց լիմպոս, որ դժոխք ալ կըսուի. և անկից ազատեց արդարոց հոգիքը։

հ. Երեք օրէն ետքը ի՞նչ եղաւ։

պ. Յարեաւ ի մեռելոց։

հ. Ո՞ր օր յարեաւ։

պ. Ի զատկի սէր յարութիւն օրը։

հ. Ո՞վ յարոյց զՔրիստոս ի մեռելոց։

պ. Ինքը զինքը յարոյց՝ իւր ածային զօրութիւնը։

հ. Յետ յարութեան քանի՞ ժամանակ մնաց աշխարքիս վրայ։

պ. Քառասուն օր։

հ. Ան քառասուն օրը ի՞նչ ըրաւ։

պ. Իւր աշակերտացը սորվեցուց քրիստոնէական հաւատոյ խորհուրդները, և սբ. Եկեղեցւոյ օրէնքները։

հ. Քառասուն օրէն ետքը ո՞ւր գնաց։

պ. Համբարձաւ յերկինս, և նստաւ ընտաւ աջմէ Հօր։

հ. Հիմայ Ան ո՞ւր է։

պ. Ամենուրեք դիէն ամմէն տեղ է. և մարդկութեան դիէն երկինքն է. և 'ի սբ. հաղորդութեան։

հ. Ան համբարձմանէն ետքը ի՞նչ հանդիպեցաւ։

պ. Ան եղաւ. որ տասն օրէն ետքը Հոգին սբ. եկաւ սբ. առաքելոց վրայ. և առաքեալները Հոգւով սրբով լեցուեցան, և գնացին քարոզեցին Անի սբ. հաւատքը ամմէն աշխարք։

հ.

Հ. Արդեօք Աստուծ վերստին պիտի գայ, թէ չէ։

Պ. Իրաւերես, 'ի կատարածի աշխարքիս պիտի գայ, ու դատաստան ընէ ամէն մարդուներնց գործոցը կէօրէ. արդարոց արքայութի պիտի տայ, և մեղաւորներուն դժոխք։

Հ. Իմակուան մեռնող արդարոց հոգիքը ո՞ւր կերթան։

Պ. Թէ որ ամենևին սբ են նէ՝ շիտակ արքայութիը կերթան. բայց՝ թէ որ ներելի մեղք ունենան նէ՝ կամ թողւած մահուչափ մեղքերուն պատիժը վճարած չըլլան նէ, քաւարանը կերթան։

Հ. Լապա մեղաւորներուն հոգիքը ո՞ւր կերթան։

Պ. Դժոխքը կերթան։

Հ. Թէ որ հիմայ արդարոց հոգիքը արքայութիւն կերթան, և մեղաւորներունը դժոխք. ուրեմն աւելորդ է, որ Աստ'ի կատարածի աշխարքիս գայ դատաստան ընէ։

Պ. Ընելորդ չէ, վասն զի հիմայ արդարները միայն հոգւով կերթան արքայութիւն, և մեղաւորները միայն հոգւով կերթան դժոխք. բայց 'ի կատարածի աշխարքիս հոգւով և մարմնով պիտի երթան. կամ թէ ըսենք, ան ժամանակը բոլոր մարդը պիտի երթայ. անոր համար պէտք է, որ Աստ գայ դատաստան ընէ. և ինքը սուրբերը արքայութիւն, և մեղաւորները դժոխքը խրկէ. հիմայ զհոգին կը խրկէ. և ան ժամանակը զմարդը կը խրկէ։

Հ. Յաւատամքին մէջը հաւատալու ուրիշ բան ալ կայ մի։

Պ. Իրաւերեա, աս ալ կայ, որ պիտի հաւատանք 'ի մի միայն կաթուղիկէ և առաքելական սբ Եկեղեցի։

Հ։ Եկեղեցին ի՞նչ բան է, կամ ո՞վ է։

Պ. Ի ժողով ամէն քրիստոնեայ հաւատացելոց՝ մէկ երևելի գլխու կառավարութեան ներքևը. որ ան գլխուն ամէնը պիտի հնազանդին։

Հ. Ո՞վ է աշխարքիս վերայ ան գլուխը։

Պ. Ի՝ սրբազան Պապը. կամ Հայրապետը հռովմէական սբ Եկեղեցւոյն։

Հ. Ի՞նչ ըսել է և ան եռքի բանը հաւատամքին, որ կըսէ, 'ի յարութի մեռելոց. և 'ի կեանսն յաւիտենականս։

Պ. Ըսել է թէ ամէն մեռած մարդիկ 'ի կատարածի աշխարքիս պիտի յարութի առնեն իրենց մարմնովը, և կենդանանան։ Եւ ան հաւատացեալները՝ որ Աստ շնորհաց մէջ մեռած են, արքայութի պիտի երթան, և յաւիտենական կեանքը ժառանգեն։

Քրիստ. 1922

Հ. Աղօթքներուն մէջը որ աղօթքն է գլխաւոր աղօթք։

Պ. Այր մեր երկինքն է, զոր Դուն շարադրեց։

Z.U.K. S.S.R. Պետական Գրադարան
Ս. Մեսրոպեան անվան
Պետական Գրադարան
Պետական Գրադարան
Պետական Գրադար

Հ. Ասէ՛, որ տեսանեմ։

Պ. Հայր մեր՝ որ յերկինս ես. սքանչելի՛ անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո ոպ յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր. ոպ և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ՝ի փորձուն՝. այլ փրկեա՛ զմեզ ՝ի չարէ։ Զի քո է արքայութի՛ն և զօրութի՛ն, և փառք յաւիտեանս. ամէն։

Հ. Հայր մեր երկինքէն ետքը՝ ո՞ր աղօթքն է առաւել գլխաւոր և ընդունելի։

Պ. Ողջոյն քեզ Մարիամն է. որ անով Աստուծմէ ետքը աղօթք կընենք առ ամենասքանչ մայր նր առ տիրամայր սքանչինը։

Հ. Ասէ՛, որ տեսանեմ։

Պ. Ողջոյն քեզ Մարիամ. լի շնորհօք. տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ՝ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ Յն։ Սրբուհի Մարիամ

ՐԻԱՄ մայր ԱՅ, աղօթեա վասն մեր մեղաւորացս այժմ և 'ի ժամու մահուան մերոյ. ամէն:

Հ. Ո՞վ շարադրեց Աղջոյն քեզ Սարիամը:

պ. Կէսմը Գաբրիէլ հրեշտակը ասաւ. կէսմը սրբուհին Աղնաբէթ. և կէսմը սբ Անկեղեցին:

Հ. Ասոնցմէ 'ի զատ ուրիշ աղօթքներ ալ կա՞ն ընդունելի ԱՅ, և մեր նոր սբ Ընծածնայ:

պ. Իրամերես կան, ՅԱՄԱԳՐՔԻՆ աղօթքները. Հաւատով խոստովանիմը. Սարեկայ աղօթքները. Ընծածնայ սբ Պարգարանը. և Լիթանեան. Հրեշտակ ան. Աղջիկներ թագուհին. և ասոնց նման ուրիշ լաւ աղօթքներ:

ԳԼՈՒԽ Ա:

Յաղագս պատուհէրանացն ԱՅ. և Անկեղեցւոյ:

Հ. Քանի՞ են ԱՅ պատուհիրանները:

պ. Տասն են:

Հ. Ըսէ՛, որ տեսնեմ։

Պ. Ա՛. Աստ եմ ես Ընծ քո. մի՛ ունիցիս զայլ աստ առաջի իմ։

Բ. Մի՛ առնուցուս զանուն Աստ քո ընդունայն։

Գ. Յիշեա՛ զօր շաբաթուն սրբել զնա, ՝ի զկիրակէս։

Դ. Պատուհեա՛ զՀայր քո և զմայր։

Ե. Մի՛ սպանաներ։

Զ. Մի՛ շնար։

Է. Մի՛ գողանար։

Ը. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։

Թ. Մի՛ ցանկար կնոջ ընկերի քո։

Ժ. Աւ մի՛ ամի, որ նորա է։

Հ. Ո՞վ տուաւ աս պատուիրանները։

Պ. Ընծ տուաւ ՝ի հին օրէնս Մովսէս մարգարէին ձեռքով. և Որ՝ն մերն մեր Հաստատեց զանոնք ՝ի նոր օրէնս։

Հ. Ո՞վ որ չի պահեր աս պատուիրանները, այնպիսին ինչ կըլլայ։

Պ. Այնպիսի մարդը մահուչափ մեղք կը մեղանչէ, և դժոխքը կերթայ։

Հ.

Հ. Քանի՞ են սբ Եկեղեցւոյ պատուիրանները։

Պ. Լինգ են։

Հ. Ըսէ, որ տեսնեմ։

Պ. Ա. Յաւուրս կիրակէից և տօնից տեսանել զպատարագ։

Բ. Պահել զպահս և զծոմապահս հրամայեալս։

Գ. Ի տարւոջն գոնէ միանգամ խոստովանիլ։

Դ. Հաղորդիլ գոնէ ի տարւոջն միանգամ, այ ի Օգտակի յարութեան Տն։

Ե. Տալ զտասանորդս ընչից։

Գլուխ Օ։

Յաղագս Խորհրդոց սբ Եկեղեցւոյ։

Հ. Քանի՞ են սուրբ Եկեղեցւոյ խորհուրդները։

Պ. Եօթն են։

Հ. Ըսէ, որ տեսնեմ։

Պ. Ա. Մկրտութիւն։

Բ. Գրոշմ։

Գ. Ապաշխարութիւն։
Դ. Աղօթք։
Ե. Վերջին օծումն։
Զ. Կարգ քահանայութեան։
Է. Պսակ։

Հ. Մկրտութիւնը ինչ է։

Պ. Սէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ, որ կը ջնջէ սկզբնական մեղքը, և մեզի Քրիստոնեայ և որդեգրական որդի Աստուծոյ կընէ։

Հ. Ով է մկրտութեան սպասաւորը։

Պ. Քահանան է. բայց հարկաւոր ժամանակը ուրիշ մարդ ալ՝ որ քահանայ չէ, կրնայ մկրտել։

Հ. Ինչով կըլլայ մկրտութիւնը։

Պ. Աս երկու բանովս, ջուր երեխային վրայ չուր լեցընելով. և ըսելով այսպէս։ Այս անուն, մկրտի 'ի ձեռն իմ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Կամ ըստ Լատինացւոց, Աս մկրտեմ զքեզ յանուն Հօր, և այլն։

Հ. Դրոշմը ինչ է։

Պ. Սէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ, որ

կը հաստատէ զմարդը 'ի հաւատն
Յեսի Քրիստոսի։

Հ. Ով է սպասաւորը դրոշմին։

Պ. Եպիսկոպոսն է. և հրամանաւ սրբ
Եկեղեցւոյն՝ նաև քահանան։

Հ. Ինչով կըլլայ դրոշմը։

Պ. Քսելով դրոշմեցելոյն ճակատը
զսրբ մեռոնը. և ըսելով զձև բանին։

Հ. Ապաշխարութիւնը ի՞նչ է։

Պ. Սէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ.
որ կը ջնջէ մարդուն մեղքերը որ
մկրտութենէն ետքը գործելէ։

Հ. Ով է սպասաւորը ապաշխարութե
խորհրդոյն։

Պ. Հրաման ունեցող քահանան է։

Հ. Քանի՞ բան պէտք է լաւ խոստովա-
նութիւն ընելու։

Պ. Հինգ բան. Ցաւ Քննութիւն. Օղջումն.
Ուղղադրութիւն. Խոստովանութիւն.
և Ապաշխարանաց վճարումն։

Հ. Ասենէ ինձի զասունք մէկիկ մէկիկ։

Պ. Ուղղ պէտք է, որ մարդ քննէ իւր
խղճմտանքը. և միտքը բերէ գոր-
ծած մեղքերը։

Ք. Օղջայ, Ֆ ցաւի անունց վրայ. և Աստուծմէ թողութիւն խնդրէ։

Ֆ. Առաջադրէ, Ֆ նիւթ դնէ, որ մէկ անգամ մին ալ ան մեղքերը չընէ։

Ղ. Արթայ խոստովանի քահանային մէկիկ մէկիկ իւր ամէն մեղքերը։

Ե. Խոստովանահօրը դրած ապաշխարանքը կատարէ։

Հ. Հաղորդուիը, կամ Սրբուիը ի՞նչ է։

Ռ. Ի մարմին, արիւն, հոգին, և ածուիթիը Որդի, Հացին ու գինուոյն տեսակաց ներքևը։

Հ. Հացը ու գինին՝ երբ կըլլան մարմին և արիւն Որդի։

Ռ. Ան ժամանակը, երբ որ քահանան պատարագին մէջը կըսէ հացին վրայ՝ Առէք կերէք, այս է մարմին իմ. և գինուոյն վրայ՝ Արբէք՝ ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ։

Հ. Որէք կերէքէն ետքը, և արբէք՝ ի սմանէէն ետքը կը մնա՞ն՝ ի հացն և՝ ի գինին իրենց բնութիը։

Ռ. Չէ. հապա միայն դրսի պատահմունք-

մունքները կը մնան. այ համը, հոտը, և ձևը. և անոնց ներքևը կայ ճշմարիտ մարմինը և արիւնը Քրիստոսի։

Հ. Հաղորդութիւն կամ Սրբութիւն առնելու քանի՞ բան պէտք է։

Պ. Երկու բան. այ մաքրութիւն հոգւոյ, և մաքրութիւն մարմնոյ։

Հ. Մաքրութիւն հոգւոյ ի՞նչ է։

Պ. Այս է, որ մարդ խոստովանած ըլլայ իւր մեղքերը. և ետքը սէր պտիւճ առնու նը Հաղորդութիւնը։

Հ. Մաքրութիւն մարմնոյ ի՞նչ է։

Պ. Այս է, որ սրբութիւն առնելու օրը՝ կէս գիշերէն սկսեալ ծոմ կեցած ըլլայ. և մաքուր կենայ։

Հ. Արդեօք պէ՞տք է որ մարդ հաղորդուած ատենը առնու հէմ մարմինը, հէմ արիւնը Քրիստոսի։

Պ. Արկաւոր չէ. միայն մարմինն առնելով՝ ճշմարտապէս առած կըլլայ Քրիստոսի մարմինը և արիւնը. ինչպէս հոգեվարք հիւանդաց միայն մարմինը կու տան ամ ազգք Քրիստոնէից։

Հ. Ինչու համար միայն մարմինը առնելով՝ արիւննալ առած կըլլայ։

Պ. Որ համար, վնզի կառնու զկենդանի մարմինը Ան, որ սէր արիւննալ հետն է։

Հ. Հաղորդութի առնելէն ետքը, ի՞նչ պէտք է ընել։

Պ. Պէտք է, որ մարդ էն քիչ մէկ ժամէկի մը չափ առանձին աղօթք ընէ. և շնորհակալ ըլլայ Անէ. և խնդրէ անկից հոգւոյն և մարմնոյն պէտք եղած բաները։

Հ. Հապա՝ ան մարդը, որ հաղորդութի առածինպէս հիչ աղօթք չըներ, այլ իսկոյն պարապ բաներու հետ կըլլայ՝ որո՞ւն կը նմանի։

Պ. Կը նմանի յուդայի, որ երբ Անի մարմինը առաւ, իսկոյն ելաւ գնաց մատնեց զԱն. և ինքը զինքը կախեց։

Հ. Ի՞երջին օծումը ի՞նչ է։

Պ. Մէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ. որ մարդուն ներելի մեղքերը ու մեղաց մնացորդները կը ջնջէ. և

զ-

զօրութիւն կու տայ հիւանդին հոգ-
ւոյն, որ քաջապէս դէմ կենայ
սատանային փորձութեանցը։

Հ. Որո՞ւն պէտք է տալ վերջին օծումը։

Պ. Միայն ծանր և վտանգաւոր հի-
ւանդաց։

Հ. Ի՞նչ է նիւթը վերջին օծման։

Պ. Ձէթն է՝ եպիսկոպոսէն օրհնած։

Հ. Կարգ քահանայութիւն ի՞նչ է։

Պ. Մէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ.
որ եպիսկոպոսին ձեռնադրութիւնը՝
տիրացու, սարկաւագ, և քահա-
նայ կըլլան ոմանք՝ 'ի սպասաւորու-
թիւն սրբ Եկեղեցւոյն։

Հ. Պսակը ի՞նչ է։

Պ. Մէկ խորհուրդ մի է Եկեղեցւոյ. որ
օրինաւորապէս պսակելոց շնորհք
կու տայ. և անլուծանելի կապա-
նօք կը կապէ զանոնք մինչև 'ի
մահ։

Պ՝ լուխ.

Գլուխ Դ։

Յաղագս Ողորմութեան։

Հ. Քանի՞ են գործք ողորմութեան։
Պ. Երկու, այ հոգեւոր. և մարմնաւոր։
Հ. Հոգեւոր գործք ողորմութեան քանի՞ են։
Պ. Եօթն են, և ասոնք են։
ա. Ուսուցանել զոգէտս։
բ. Տալ զբաջի խորհուրդ տարակուսելոյն։
գ. Սնուցանել զվշտացեալս։
դ. Խրատել զմեղուցեալս։
Ե. Դարձել ընկերին զընկալեալ վնասն։
զ. Համբերել պակասութեանց ընկերին։
է. Աղօթել վասն կենդանեաց և մեռելոց։
Հ. Մարմնաւոր գործք ողորմութեան քանի՞ են։
Պ. Եօթն են, և ասոնք են։
ա. Կերակրել զքաղցեալս։
բ. Արբուցանել զծարաւեալս։
գ. Հագեցուցանել զմերկս։
դ. Ընդունիլ 'ի տուն զօտարս և զպանդուխտս։

Ե. Տեսանել զհիւանդս։
Զ. Այց առնել քանտարկելոց։
Է. Թաղել զմեռեալս։

Գլուխ Ը։

Յաղագս Մեղաց։

Հ. Մեղքը ի՞նչ է։
Պ. Ամենայն խօսք, կամ գործ, կամ խորհուրդ, որ Աւյ հրամանքին դէմ է, մեղք է։
Հ. Քանի՞ տեսակ մեղք կայ։
Պ. Երկու, ՝ի սկզբնական. և ներգործական։
Հ. Սկզբնական մեղքը ի՞նչ է։
Պ. Ան մեղքն է, որ ամէն մարդու վրայ կը գտնուի ծնածին պէս. և ասի կը քաշէ՝ի յանհնազանդութենէ մեր առաջին հօրը՝ ՝ի Ադամայ։ Եւ աս մեղքս կը ջնջուի մարդուն վրայէն սրբ մկրտութիւն։
Հ. Ներգործական մեղքը ի՞նչ է։
Պ. Ան չարն է, որ մարդ խորհրդով. քանիւ. և գործով՝ իւր կամօքը կը գոր-

գործէ Աստուծոյ հրամանքին դէմ։ Այս
ասկից՝ միայն ճշմարիտ ապաշխա-
րութիւն և խոստովանութիւն կրնանք
ազատիլ։

Հ. Ներգործական մեղքը քանի՞ տեսակ է։

Պ. Երկու, այ՝ ներելի. և մահուշափ։

Հ. Ներելի մեղքը ի՞նչ է։

Պ. Ան թեթեւ և փոքրիկ չարն է, որ
մարդ կը գործէ օրինաց և կանո-
նաց դուրս. որ դժոխք չի տանիր
զմարդը։

Հ. Անհուշափ մեղքը ի՞նչ է։

Պ. Ան ծանր՝ և մեծ չարն է, որ կը
զրկէ մարդը 'ի շնորհացն Աստ, և
յարքայութենն. և դժոխքը կը տանի։

Հ. Քանի՞ են գլխաւոր մահուշափ մեղ-
քերը։

Պ. Եօթն են, և ասոնք են։

ա. Հպարտութիւն։

բ. Նախանձ։

գ. Բարկութիւն։

դ. Ագահութիւն։

ե. Ծուլութիւն։

զ. Ցրկրամոլութիւն։

է. Բղջախոհութիւն։

Գլուխ Զ։

Յաղագս Երկնից հարցման։

Հ. Վ երկինք մարդոյ քանի են։

պ. Չորս են, այ Սահ. Դատաստան. Դժոխք. և Արքայութիւն։

Հ. Դանի դատաստան կայ։

պ. Երկու, այ առանձնական դատաստան. և ընդհանրական դատաստան։

Հ. Ո՞նչ է առանձնական դատաստանը։

պ. Ան է, եթէ մարդը կը մեռնի, հոգւովը կերթայ Դա՚ի առեանը. եթէ ամենեին արդար է, արքայութիւն կը խրկէ զնա Դա. և թէ ալոդար է, բայց արատ մը ունի՝ քաւարան կը խրկէ. իսկ թէ անզեղջ մեղաւոր է՝ դժոխք կը խրկէ զնա։

Հ. Ո՞նչ է ընդհանրական դատաստանը։

պ. Ան է, որ՚ի կատարածի աշխարքիս Դա՚ն կու գայ դատաստան ընելու, և ամենեն մարդու որ յարուցի առեր են,

են, իրենց գործքին համեմատ՝ կամ արքայութիւն կու տայ՝ կամ դժոխք կը խրկէ։

Հ. Դժոխքը ի՞նչ է։

Պ. Մէկ զարհուրելի և անդնդային բանտ մի է. և հոն կերթան հիմայ մեղաւորները հոգւով, և ընդհանրական դատաստանէն ետքը հոգւով և մարմնով, և հոն կը մնան յաւիտեանս յաւիտենից, և մէկմընալ չեն կրնար անկէց ազատիլ։

Հ. Դժոխքը ի՞նչ կայ։

Պ. Սաստիկ մեծ կրակ կայ, և պէսպէս տանջանքներ։

Հ. Դժոխքը ո՞ւր է։

Պ. Հողուն տակը աշխարքիս մէջ տեղն է։

Հ. Քանի՞ դժոխք կայ։

Պ. Երկու։

Հ. Ասէ մէկիկ մէկիկ, որ տեսնեմ։

Պ. Առաջին դժոխքը էր լիմպոսը որ Սահապետաց, և Արդարէից. և Դ ան դժոխքը աւրեց։

Եր-

Երկրորդ դժոխքն է յաւիտենական լիմպոսը չի մկրտուած տղայոց. և հոն կրակ չի կայ։

Երրորդ դժոխքն է յաւիտենական դժոխքը դատապարտեալ մեղաւորաց. և անտեղը անոնք՝ և սատանաները կերին և կըտանջըւին յաւիտեան յաւիտենից։

Չորրորդն է քաւարանը. որ տեղ մի է կրակով լիք. և անտեղը կերթան ան արդարոց հոգիքը, որ ներելի և փոշէտեսակ մեղաց մէջ մեռած են. և կամ ապաշխարանքնին չեն լմնցուցեր. և հոն կըտանջըւին, մինչև որ մեղքերուն պատիժը լմնայ. և ետքը կազատին, և արքայութի կերթան։

Հ. Երդեօք մենք աս քաւարանի մէջ եղած հոգիներուն կրնա՞նք օգնութի ընել, թէ չէ։

Պ. Իրամերես, կրնանք։

Հ. Ինչո՞վ կրնանք։

Պ. Պատարագով, աղօթքով, ողորմութիւն, և ուրիշ բարի գործքերով

ալ

ալ կրնանք անոնց օգնել. որ շուտ ազատին քաւարանին տանջանք-ներէն։

Հ. Ընքայութիւնը ի՞նչ է։

Պ. Այ երեսաց տեսութիւն է, որ կը տեսնեն արդարները. և անտեղը անպատմելի պայծառութիւն և փառ-կութիւն կուրախանան յաւիտեանս յաւիտենից։

Հ. Ընքայութիւնը ո՞ւր է։

Պ. Երկինքն է. կամ աս երևցած աստ-ղերուս վրայ փառաւոր գեղեցիկ և անպատմելի տեղ մի է։

Որուամ արժանի արասցէ ամենողորմն Աստ զամենեսին զնա, որ չանան ուսանիլ և սերտել զայս փոքրիկ քրիստոնէական վարդապետութիւն. Ամէն։

ԽՐԱՏ

ԽՐԱՏ

Ապաշխարութեան խորհուրդին վրայ։

Ինչպէս որ Քրիստոնէական վարդապետութիւնը տրվիլ և լաւ գիտնալ հարկաւոր է ամէն քրիստոնէի, նոյնպէս ալ ապաշխարութեան խորհուրդը լաւ հասկընալ և լաւ կատարել հարկաւոր է. որովհետև մկրտութէն ետքը փրկութեան ճանապարհը ապաշխարութիւն է։ Այսոր համար Քրիստոնէական վարդապետութէն ետքը դրինք աս տեղս մասնաւոր խրատ ապաշխարութեան խորհուրդին վրայ, որ ամէն մարդ աս հարկաւոր խորհուրդը լաւ կատարելու կերպը գիտնայ։

Ապաշխարութիւն՝ ինչպէս վերը ըսինք, Եզեկ. 23. Մէկ խորհուրդ է Եկեղեցւոյ, որ կը կանչէ մեղաւորը որ

Հիւպոլիէնէ եպիսկոպոսէ գոչծէրէ. և կը կատարի խոստովանուն. ինչպէս դրոշմը օծմամբ, և մկրտութիւնը լուացմամբ։

Խոստովանութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ մարդ իր ըրած մեղքերը ինքը պիտի յայտնէ, և մէկիկ մէկիկ իր բերնովը խոստովանի պատմէ խոստովանահօր առջևը, ու մեղայ գոչէ, և արձակումն առնու։ Այս՝ հինգ բանով կըլլայ, ինչպէս վերը Քրիստոնէական վարդապետութեան մէջ նոյն տեղը լսինք. ՝Ի՝, Ընտրութիւն. Զղջում. Առաջադրութի. Խոստովանութի. և Պարշխարանաց վճարումն։

Ընտրութիւը ան է, որ առաջ հանդարտ սրտով քու խղճմտանքդ պիտի քննես, և ամէն մեղքերդ զատ զատ միտք առնուս։ Այս որովհետև քննութիւը քիչմը դժուարին է, ասոր համար ընդարձակ կերպով ճամբայ ցըցուցինք վերը՝ որ առանց դժուարութեան կարենաս կատարել։

Ընտրութենէն ետքը պէտք է որ կատարեալ զղջում ընես, ՝Ի՝ քու մեղքերուդ

րուդ վրայ մեծ ցաւ ունենան՝ թէ ինչ-
ՀՈՒ համար ըլի։ Այս ցաւը սրտիդ մէջ
ամէն ցաւերէն սաստիկ պիտոր ըլլայ՝
թէ ինչՀՈՒ համար իմ ամենաբարի Աստ-
ծոյ բարկացուցի. և հաստատ առաջա-
դրութիւն ալ պիտի ընես, որ մէկմէնալ
անանկ գործքեր չի գործես Այ կամաց
դէմ։ Նաև պատրաստական կամք ու-
նենաս պիտոր խոստովանահօրը տուած
ապաշխարանքները ընդունելու, և յօ-
ժարութիւն կատարելու։

Այս զղջումը և առաջադրութիւնը դիւ-
րացնելու համար մէկ աղօթքմը դրինք
նոյնպէս վարը, որ անոր մէջը նաև
կըխոստանաս Այ ապաշխարանքներդ
վճարել։

Անկից ետքը խոստովանութիւն ա-
ղօթքնալ պէտք է որ զրուցես, և եր-
թաս խոստովանիս մեղքերդ մէկիկ մէ-
կիկ ամէն պարագայներով իրաւասու-
թիւն իշխանութիւն, և հրաման ունեցող
քահանային առջևը։

Մեղքերդ զրուցելու ատենը ինքդ
զինքդ պիտի ամբաստանես, զուրիշը
պատճառ չի բռնես։ Ա-

Ամբէնալէն, կամ ուրիշ բանիմը համար, քու կամքովդ խոստովանանքին մէջը մէկ մահուշափ մեղքմը պիտի չի պահես։

Խոստովանանքին մէջ կամաւ ստուտ պիտի չի զրուցես։

Անղքերդ պատմելը լսմնցնելէն ետքը՝ խոստովանահօր տուած խրատներուն ու դրած ապաշխարանքին լաւ ուշ պիտի դնես՝ միտք առնուս. որպէսզի ետքը կարենաս կատարել. ապա թէ չէ խոստովանանքը փուճ կըլլայ։

Ան վերջը մեղայ պիտի գոչես ամմէն մեղացդ վրայ, եթէ ըսածներուդ, եթէ մոռցածներուդ, պզտիկուց 'ի վեր ինչ որ ըրեր ես։ Ան արձակում առնուս ելլես. և խոստովանութէ ետքը դրած աղօթքները զրուցես, ապաշխարանքդ կատարես։

Ան ասանկ ամմէն բանը զգուշութիւն ընելով, ապաշխարութիւն խորհուրդը լաւ կըրնաս կատարել։

—o—

Պրն-

Քննութիւն խղճմտանքի Աստուծոյ տասը պատուիրաններուն վրայ։

Առաջին պատուիրան.

Ես եմ տէր Աստուծ քո. մի ունիցիս զայլ աստուածս առաջի իմ։

Առանց դէմ դրանչէրէս,

Նրթէ հաւատքի հարկաւոր բաները սորվելու փոյթ չունեցար, կամ սորվելէն ետքը ծուլութեդ մոռցար։

Նրթէ քու իշխանութեդ տակը եղողներուն սորվեցնելու անփոյթ եղար։

Նրթէ կարծիք ունեցար թէ ամէն մարդ իր հաւատքով փրկութեան կրնայ հասնիլ։

Նրթէ հաւատքի մասունքներուն վրայ երկմտեցար։

Նրթէ սբ բաներու պատիւ չի տուիր։

Նրթէ Աստուծ անունը, ու սբ գրոց բաները պարապ տեղ յիշեցիր։

Նրթէ Աստուծմէ աւելի, կամ Աստուծ հաւասար՝ աշխարքիս մէջ բանը սիրեցիր։

Եթէ մարդկային նկատման, կամ վախու համար ուղղափառութիւնը ուրացար։

Եթէ սատանաներու դիմեցիր։ Եթէ դիւթութիւններու, կախարդութիւններու, և հմայութիւններու, քեզի համար՝ կամ ուրիշին համար՝ մտիկ ըրիր։ Եթէ ասանկ բաներ սորվեցար, կամ սորվեցուցիր։

Եթէ քու քովդ կախարդական գրքեր՝ կամ համայիլներ պահեցիր։

Եթէ երազներու, կամ երազ մեկնողներու հաւատացիր։

Եթէ հերետիկոսներու գրքեր պահեցիր քովդ, կամ կարդացիր։

Եթէ Ս.Յ ողորմութէն յուսահատեցար, կամ ողորմութիւնը վրայ յանդգնելով չար բաները շարունակեցիր, վարքդ չի շիտակեցիր։

Եթէ մեղքերդ չուզեցիր զղջալ, մահուան ատենը թող տալով։

Եթէ աս կեանքը հանդերձեալ փրկութէն աւելի սիրեցիր։

Եթէ հոգևոր բաներէն զզուեցար, կամ ձանձրացար։

Եթէ

Եթէ ինքդ զինքդ ճանչցած ատենդ՝ հաւատոյ յուսոյ և սիրոյ ներգործութիւնները հանելու անփոյթ եղար։ Եթէ աս ներգործութիւնները շուտ շուտ հանելու փոյթ չունեցար, կամ չըրիր։

Եթէ աղօթքի մէջ, ժամասացութիւն, պատարագի առջևը միտքդ վրադ ժողվելու անփոյթ եղար։

Եթէ սը խորհուրդներու մօտեցած ատենդ լաւ պատրաստութիւն տեսնելու փոյթ չունեցար։

Եթէ Եկեղեցւոյ պաշտօնեայները արհամարհեցիր, կամ չերմեռանդները ու բարեպաշտները ծաղր ըրիր։

Եթէ սը կարգ ունեցողի զարկիր, կամ ինչ կերպով ըլլայ նէ կարգին պատիւը՝ ոտից տակ առիր։

Երկրորդ պատուիրան.

Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն:

Ասէ տէր Հեղանէրէս.

Եթէ Աստուծոյ, և սրբոց անունը հայհոյեցիր, և եթէ բաւած ժամանակդ զԱստուծոյ բարկացնելու և նախատելու համար ըսիր:

Եթէ պէտք չեղած ժամանակը երդում ըրիր:

Եթէ գիտուելթը կամ կարծիքով սուտ երդում ըրիր. կամ ուրիշին սուտ երդուընալու պատճառ եղար:

Եթէ երդումով բանը խոստացար, ու չի պահեցիր. կամ եթէ չար բան ընելու կամ բարի բանը չընելու՝ երդում ըրիր. կամ ուրիշին պատճառ եղար՝ սանակ երդում ընելու:

Եթէ առանց մտածելու պէտպէս ուխտեր ըրիր. կամ ինչ որ ուխտեցիր նէ՝ չի կատարեցիր, կամ չուզեցիր կատարել:

Եթէ

Եթէ զինքդ կամ զուրիշը անիծեցիր։
Եթէ քու վրադ, կամ ուրիշին վրայ
Այ անէծքը կամ պատիժը խնդրեցիր։

Երրորդ պատուիրան.

Յիշեա՛ զօր շաբաթուն օրբել զնա,
՝ի զկիրակէս։

Աւուր գէմ մեղանչէրէս,

Եթէ տօն օրերը չի պահեցիր՝ գործելով, կամ ուրիշին գործել տալով Եկեղեցւոյ արգելած գործքերը։

Եթէ կիրակի տօն օրերը մեղանչական գործքեր ըրիր, կամ մեղաց տեղերը գնացիր զբօսանք ընելու։

Եթէ ամենեին հոգևոր բաներուն ետևէն չեղար, կամ քու իշխանութենդ տակը եղողներուն վրայ փոյթ չի տարիր։

Եթէ մահուշատի մեղքիմը մէջ գիտնալով զքեզ, Եկեղեցւոյ խորհուրդմը առիր։

Եթէ Եկեղեցւոյ մէջ գէշ մեղքմը ըրիր, կամ բանադրած ըլլալով Եկեղեց-

ղեցւոյ խորհուրդներ առիր, կամ ժամակարգութիւն ու ածային պաշտօններ կատարեցիր ուրիշներուն հետ, կամ դասը կեցար։

Զ. ՈՐՊԻՍՍ ՊԱՏՊՈՒՀԻՆՆ.

Պատուեա զհայր քո և զմայր։

Էր. ՊԷՏ ՏԷՂԱՆԻՆԷՆ,

Եթէ գործքով կամ խօսքով հայրդ մայրդ ամհամարհեցիր կամ բարկացուցիր։

Եթէ հայրդ մայրդ բամբասեցիր, և անոնց դէմ բաներ զրուցեցիր։

Եթէ անոնց մահուան ցանկացար, կամ վնասելու ետևէն եղար։

Եթէ զանոնք ծաղր ըրիր, կամ իրենց պակասութիւնը դուրս հանեցիր ու խայտառակեցիր։

Եթէ իրենց հրամանէն դուրս բաներ ըրիր, կամ առանց իրենց հարցնելու տնէն բաներ վերցուցիր, կամ գողցար։

Եթէ հոգևոր հօրդ կամ վարպետիդ

անհնազանդ եղար, կամ արհամարհեցիր, կամ սրդողցուցիր։

Եթէ պատճառ եղար ուրիշին ալ այսպիսի մեղքեր գործելու, չար օրինակ կամ խրատ տալով։

Եթէ հայրը և մայրը իրենց որդիքը անիծեցին կամ հայհոյեցին։

Եթէ զանոնք լաւ ու պարկեշտ չի մեծցուցին, կամ աղօթք ու Քրիստոնէական վարդապետութի չի սորվեցուցին։

Ինգերորդ պատուիրան.

Մկ սպաններ։

Էսոր դէմ հեղանիրէ,

Եթէ մէկը զարկիր, կամ վիրաւորեցիր, կամ սրով, կամ թունով, կամ ուրիշ կերպով մէկը սպաննեցիր. կամ ուրիշին յանձնեցիր ասանկ բանը ընել. կամ ընողին հաւնեցար։

Եթէ վրէժխնդրութի ընելու համար մէկը ատեցիր, և շատ ժամանակ կեցար անանկ։

Եթէ

Եթէ ատելութիւն կամ ծուռ նայելով զուրիշը վիրաւորեցիր, կամ ուրիշի դէմ ոխ ունելով քու սրտիդ մէջ սպաննեցիր։

Եթէ չուզեցիր հաշտուիլ, կամ եղած վնասին ներել, կամ ըրած վնասիդ համար թողութիւն չուզեցիր։

Եթէ բարկութիւն զքեզ կամ զուրիշը անիծեցիր, թէ կենդանի ըլլայ և թէ մեռած. կամ բարկութիւն ատենը նախատական խօսքերով զուրիշը սրդողցուցիր ու մեղաց պատճառ եղար։

Եթէ ուրիշին մէջ խառնվուիլ ու թշնամութիւն սերմանեցիր։ Այս մեղքս շատ կըրնայ մեծնալ. անոր համար պէտք է մէկիկ մէկիկ պատմել ինչ չարիք որ ասկից հետևեցաւ, որպէսզի թողութիւն գտնես։

Եթէ մեղանչական բաներու համար զուրիշը գովեցիր։

Եթէ չար օրինակ ու չար խրատ տուիր, գէշ բաները գովելով, ու լաւերը վար զարնելով։

Եթէ զուրիշը կերցուցիր խմցուցիր

չափէն աւելի, ու գինովցուցիր, քու զբօսանքիդ համար, կամ իրէն ձկան հասցնելու համար։

Ինչէ աղքատաց դէմ անգթութիւն ըրիր, ատեցիր, արհամարհեցիր, ու վռընտեցիր։

Ինչէ դատողութիւն ուրիշին գործքը ծուռ մեկնեցիր, և կամ չար կարծիք գնացիր։

Ինչէ զուրիշը թամբասեցիր, կամ իրաւ և սուտ՝ անունը աւրեցիր, ետևէն գէշ բաներ զրուցելով։

Ինչէ եղբայրական սիրով չի սիրեցիր զուրիշները, և ամմէնուն բարիք չի կամեցար։

Ալէյէրոյդ և ինձէրոյդ պատուհիրան.

Մի շնար։ Մի ցանկար կնոջ ընկերի քո։

Այս պատուհիրաններու դէմ շատ տեսակ մեղքեր կըրնան ըլլալ, որք պէս-

պէս

պէս պարագայից համար կը զանազանին, ու շատ կը տարբերին մէկզմէկէ. բայց ամենալի նիւթ ըլլալով՝ չի վայելեր այնչափ մանրամասն խօսիլ։ Ուրեմն մտածէ։

Եթէ գէշ ու աղտեղի բաներ մտածեցիր. եթէ կամաւ անանկ բաներու մէջ կեցար, կամ հեշտացար, կամ անոնց հաւնեցար, կամ գործքով ինքիրէն՝ կամ ուրիշին հետ կատարեցիր։

Եթէ կամաւ մեղք ընելու ցանկացար, և ան փափագով մէկուն վրայ աչք ձգեցիր, կամ անի ակնեցիր։

Եթէ մարմնաւոր հեշտութիւն անպարկեշտ գրքեր կարդացիր. կամ եթէ բանմը կերար՝ որ զքեզ մեղքի գրգռես. եթէ չար մտքով տեղը գնացիր, կամ անկից անցար՝ զմէկը տեսնելու և հեշտանալու համար. կամ եթէ զինքդ որոգայթի մէջ ձգեցիր մեղանչելու. կամ եթէ երազի մէջ մեղք ընելու մտքով քնացար, կամ արթնցած ատենդ անով հեշտացար։

Վերջապէս ինչ ըլլայ թող ըլլայ,

աչ-

աչքով, ականջով, մանաւանդ ձեռքով, և մտքով ամէն պզտիկ մարմնաւոր հեշտութիւն և ցանկութիւն համար եղած բաները աս պատուիրաններուն դէմ են. և մեծ մեղք են՝ եթէ որ կամաւոր և հաւանութիւն կըլլան: Ուստի լաւ պէտք է քննես քու խղճմտանքդ աս նիւթիս վրայ: Եւ ամէն բաները, եթէ կամաւոր ըլլայ, և եթէ ակամայ, խոստովանաւորդ պէտք է յայտնես:

Ամենէրսէրդ և փոքանէրսէրդ պատուիրան.

Մի՛ գողանար: Մի՛ ցանկար ամի, որ ինչ ընկերի քո է:

Ասոնց դէմ հեղանէրէս,

Եթէ բաներն գողցար: Ասոր պարտքերը պէտք է բացատրել, թէ որչափ էր, կամ եթէ սրբազան բաներ էր, կամ 'ի սբ տեղաց էր:

Եթէ ուրիշներուն ապրանքը պահեցեր իրենց կամքին դէմ, կամ ուրիշին

ապ-

ապրանքը ձեռքդ, անցնելով քեզի համար պահեցիր։

Եթէ գնած կամ ծախած ատենդ զընկերդ խաբեցիր։

Եթէ անիրաւ վաստակի համար ուրիշին ապրանքը ուզեցիր առնուլ կամ պահել։

Եթէ վաշխառուութի (ՅՈՒ մամէլէճուութի) ըրիր. կամ ասանկ անիրաւ խարդախ ու խաբեբայ մարդու հետ ընկեր վաճառի (ՅՈՒ օրթախ) եղար, որպէսզի անիկակ խաբէ շահի, և դու բաժին առնուս։

Եթէ քու գործքդ կամ պաշտօնդ լաւ չի կատարեցիր, որ անոր համար օրէ օր վարձ կառնէիր։

Եթէ անիրաւ դատեր հանեցիր, կամ արդար դատերու մէջ խաբէութի ըրիր, քու շահդ կամ խօսքդ առաջ տանելու համար։

Եթէ անպատշաճ (ՅՈՒ մինասիպէթսիզ) միջոցով բանը ստացար, որ իրաւամբ չէիր կրնար ստանալ. կամ ուրիշին օգուտը ու շահը անիրաւութիւն արգելեցիր։

Եթէ

Եթէ գողութեամբ ընկեր եղար, կամ գողունի բան գնեցիր, կամ գողին օգնեցիր, յորդորելով, գողցած բանը պահելով, ծախելով, և ինչ կերպով որ ըլլայ։

Եթէ աժան, կամ պակաս գնով բան գնեցիր ուրիշէն, որ կամ գողութիւն էր, կամ գտեր էր, կամ վնզի ծախողը կարօտութեամբ մէջ էր։

Եթէ գտած բանիդ տէրը չի փընտրուեցիր. կամ տէրը չի գտնալով աղքատաց չի տուիր։

Եթէ պարտքդ վճարելու անիրաւեղար, կամ ծառայներուդ ու մշակներուդ վարձքերը կտրեցիր զրկեցիր։

Եթէ վարձքով բռնած բանդ խնայելով չի գործածեցիր, և ինաս հասուցիր տիրոջը։

Եթէ փոխով առած բանդ աւրեցիր, կամ լաւը առիր՝ գէշը դարձուցիր։

Եթէ ուրիշին առուտուրին ինաս հասուցիր։

Եթէ չափէ դուրս վարձք ուզեցիր

ծառայութեդ համար, գիտնալով թէ կարօտ է քեզի։

Եթէ սուտ ստակ գործածեցիր, կամ չգիտնալով առնելէն ետքը, ուրիշին լաւի տեղ տուիր։

Ամբէրտ պապուՀիան.

Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։

Առաջ քան Հեղանչէրէս,

Եթէ դատաստանի մէջ, կամ անկից դուրս սուտ վկայութի՛ տուիր, կամ զուրիշը ստիպեցիր ասանկ բան ընելու։

Եթէ մահուչափ սուտմը ըսիր՝ ընկերիդ վնասին համար։

Եթէ ուրիշին լաւ անունը աւրեցիր սուտ ու մուտ կարծիքներով։

Եթէ զուրիշը բամբասեցիր ու զըրպարտեցիր, չըրած չարութիը ըրածի պէս՝ մէկին մէկալին զրուցելով։

Եթէ ուրիշին վրայ եղած բամբասանքը սրտանց մտիկ ըրիր։

Եթէ ուրիշին մէկ մեծ ու ծածուկ մեղքը յայտնեցիր։

Եթէ-

Եկեղեցւոյ հինգ պատուիրանքներուն վրայ։

Առաջին պատուիրան.

Յաւուրս կիրակէից և տօնից տեսանել զպատարագ։

Որոշ դէմ հեղանչէրէն,

Եթէ կիրակի ու տօն օրերը հինչ պատարագ չի տեսար, կամ տեսար ալ նէ՝ կիսկատար բանմը, կամ միտքդ վրադ չի պահելով։

Եթէ Եկեղեցւոյ մէջ անպարկեշտ, սա դին՝ ան դին նայելով, մէկին մէկալին հետ խօսելով կեցար, և չիմացար ինչպէս շուտով լմնցաւ պատարագը։

Եթէ մարդկանց ցըցունելու համար միայն գնացիր պատարագ տեսնել; և ոչ 'ի փառս Աստուծոյ։

Եթէ քու իշխանութեանդ տակը եղողներուն փոյթ չի տարիր, որ պատարագ տեսնեն. կամ ուրիշին չի տեսնելու պատճառ եղար։

Ութերորդ պատուիրան.

Պահել զպահս և զծոմապահս հրամայեալս։

Ասա՛ զէմ մեղանչելոյ,

Եթէ մեծ պաքը, կամ ուրիշ հրամայեալ պաքերը և ծոմերը չի պահեցիր։

Եթէ չորեքշաբթի և ուրբաթ պաքդ աւրեցիր։

Եթէ ուրիշին պատճառ եղար, կամ փոյթ չի տարիր որ պահեն, եբոր կըրնայիր և պարտքդ էր։

Ութերորդ և չորրորդ պատուիրան.

Յ'ամենայն տարեւոջն գոնէ միանգամ խոստովանիլ։

Յաղորդիլ գոնէ 'ի տարեւոջն միանգամ, ՅԻ 'Ի Յատկի յարութեանն։

Ասա՛ զէմ մեղանչելոյ։

Եթէ խոստովանանք չեղար, կամ Սրբութեի չառիր հիչ որ չէ նէ տարին անգամը, գոնէ Յատկին օրերը։

Եթէ

Եթէ եղար՝ բայց ամբէնալէն, կամ ուրիշ բանիմը համար խոստովանանքի մէջ մահուչափ մեղքը պահեցիր, և խոստովանանքը փուճ ըլլալով պարտքդ կատարած չեղար։

Եթէ քու իշխանութեանդ տակը եղողներուն աս տարեկան խոստովանութիւնը, և սրբութիւն առնելու պարտքը կատարել տալու անփոյթ եղար։

Ինգերորդ պատուիրան.

Տալ զտասանորդս ընչից։

Որ գէմ հեղանչէրնս,

Եթէ ըստ քու կարողութեդ ողորմութիւն չի տուիր աղքատաց։

Եթէ հոգևոր բաներէն ետ կեցար ըստկի խնայելու համար, որ կարողութիւն ունէիր, և կրնայիր, մանաւանդ պարտական էիր ընել։

Եթէ շատ վաստկիլ սիրեցիր. բայց շատ ողորմութիւն տալ չուզեցիր։

Ասելք մահուշապ մեղքերու վրայ։

Առաջին ընդ.

Եթէ չի ճանչցար՝ թէ ինչ բարիք որ ունիս Աստուծմէ են. հապա կարծեցիր թէ քեզմէ՝ ու քու քաջութիւնդ ունեցար։

Եթէ մեղքը ընելու համար պարծեցար, կամ բարի բանիմը համար մեծամտեցար։

Եթէ ինքդ զինքդ հաւնեցար, և զուրիշը արհամարհեցիր։

Եթէ քու խելքիդ աւելի հետևեցար, քան թէ բարի խրատուց, ծնողաց, հոգևոր հարց, են։

Եթէ քու խելքդ թէ, իմաստութեան, խոհեմութեան, զօրութէ, ու վատկիդ վրայ յուսացիր։

Երկրորդ մեղ ընդ.

Եթէ ուրիշին բարիքներուն վրայ տրտմեցար, կամ անոր փնասին ցանկացար։

Եթէ

Եթէ ուրիշին բարիքը խափանել չանացիր, կամ չի կարելով տանիլ, կամ քեզի բարիք կարծելով։

Բ՚ոչիւ-ի ընդ.

Եթէ սրդոզած ատենդ, թէ սրտով, թէ բերանով, զՆ՚ծ կամ սրբերը կամաւ նախատեցիր կամ անիծեցիր։

Եթէ սաստիկ վրդովեցար, մինչև ըրածդ ըսածդ չէիր գիտեր կիրքդ ելած ատենը։

Ա՚գահիւ-ի ընդ.

Եթէ գնած, կամ ծախած, կամ փոխած ատենդ, կամ ուրիշ անիրաւ դաշնադրութիւն մէջ մէկը խաբեցիր։

Եթէ շատ հարստութեան ցանկացար։

Եթէ ըստկի մեծ սէր ունեցար։

Եթէ ըստկի խնայելով աղքատներու ողորմութիւն տալու յօժարութիւն չունեցար։

Հ՚ոգալ-ի ընդ.

Եթէ անփոյթ եղար ինչ որ պէտք է նէ քրիստոնէին սորվիլ, կամ սորվեցնել։

Եթէ

Եթէ ծուլութեան համար Աստուծոյ արժանաւոր պատիւ չի տուիր, կամ բարի բաներու ազդեցութիւնը արհամարհեցիր։

Եթէ ժամանակդ պարապ անցուցիր, մէկ հոգևոր կամ մարմնաւոր բարի բանիմը եռեռէ չըլլալով։

Եթէ հոգևոր աղօթքներէն ու ջերմեռանդութիւններէն ձանձրացար, կամ իրիկուն առաւօտ առանց աղօթքի անցուցիր՝ պարզ չաշխատելու և ծուլութեան համար։

Որիրամոլութիւն

Եթէ վերջին վախճանդ ուտելու խմելու վրայ դրիր. ու անկից մահուչափ մեզքիմը մէջ ընկար։

Եթէ այնչափ կերար խմեցիր, մինչև գինովցար, ու զքեզ կորսնցուցիր։

Եթէ ասանկ չափէ դուրս ուտելու խմելու քաղձանք ունեցար։

Եթէ անյագաբար և սաստիկ ախորժակաւ ուտելու և խմելու ատենդ կեկակրոյ ու գինուոյ սէր ձգեցիր։

Եթէ շատ տեսակ անուշահամ ու քաղցր կերակուրներու և գինիներու

եւեւէն եղար պարզ կոկորդի հեշտութեան համար։

Բոլշոյհոութիւն ԸՆԷՐ։

Ամէն մարմնական մեղքումը հեշտացար, ինչ կերպ ըլլայ թող ըլլայ, թէ մտքով, թէ խօսքով, և թէ գործքով։ Ամէն մեծ ու պզտիկ մարմնական հեշտութիւն աս մահուշատ մեղքին տակն է. ուստի լաւ պիտի քննես քու խղճմտանքդ աս նիւթիս վրայ, ու էն մանար պարագայները պիտի յայտնես խոստովանութեան մէջ։

Բայց ամէնուն վրայ մտածելէն ետքը ամէն անգամ կը ընաս քեզի ամբաստանել խոստովանութեան մէջ, թէ ածային սիրոյ դէմ մեղանչերեմ, վասն զի ինչպէս որ պէտք է սիրել, պատուել, յարգել, և ծառայել Աստուծոյ, չըրի ըսելով. որովհետև որչափ ընենք միշտ պարտական ենք աւելի ընելու. նոյնպէս ընկերի սիրոյն վրայ ալ. մանաւանդ՝ եթէ ամուսնացեալ ես՝ պէտք է նայիս թէ ինչ պարտականութիւն կայ

ամուս-

ամուսնացելոց մէջ մէկզմէկու վրայ։ Դարձեալ՝ եթէ տէր ես, եթէ տիկին ես, եթէ սպասաւոր ես, եթէ աղախին ես, ըստ քու վիճակիդ, քննէ քեզի, և ընկերիդ դէմ պարտքդ ինչ էր նէ, թէ չես ըրած՝ պակաս գտնլուներես նէ՝ զղջա ամմէն մեղքիդ համար, և խոստովանէ։

Ը. ԳԼՈՒԽ ԶՂՋՄԱՆ ԵՒ ՍՈՍԿԷՍՈՒԹԵՆ։

Ամենակալ Ած և Ամի՛ տը գերագոյն՝ Այր ամենիմաստ ամենաբարի արդար և բարեգութ։ քեզ երկիրպագանեմ խոնարհաբար։ զքեզ պատուեմ, և յարգեմ, և բաղձամ սիրել զքեզ՝ ի բոլոր սրտէ, ի բովանդակ մտաց, և յամ զօրութենէ իմմէ՝ ի վեր քան զամ։ Այլ ինձ, զկիսոյդ անօրինեալ հեռացայ՝ ի քէն Ած իմ և տը։ Այս ահա ճանաչեմ ըստ կարի զախտանս իմ, և զոր խորհրդով բանիւ և գործով և զանցառութեամբ յանցեայ ընդդէմ ահեղ ածութեան քո։ վայ զղջամ խոկապէս,

և վշտացին թախանձանօք ապաշաւեալ
ցաւիմ 'ի բոլոր սրտէ դառնագէտ կըս-
կըծանօք 'ի վերայ ամ մեղաց, որովք
զանծային մեծվայելչութիւն քո զայրացու-
ցեալ վշտացուցի. և այսօր գարշիմ 'ի
նոցանէ զայրացին զչարանօք, և փու-
թամ ցայն վայր սատակիչ ատելութիւն զի-
նել դիմամարտ, մինչև չընծայել երբէք
միւսմ 'ի նոցանէ հաւանութիւն միւս-
անգամ։ Եւ քանզի դու միայն ես
Լայր ողորմութիւնք, և Ամ ամ մխիթա-
րութիւնք, հայցեմ խոնարհաբար 'ի քում
մէ մարդասիրութէ ներել իմոց բազմա-
պիսի մեղացս յանցանաց, վասն արդեանցդ
չարչարանաց փրկչին իմոյ, և անգին
արեան Որդւոյ քո սիրելւոյ. և ապա-
սինեալ 'ի շնորհաց Հոգւոյդ նոցս յօ-
ժանդակութիւն, յուսալ ադրեմ հաս-
տատութիւն սրտի պահել այսուհետև
զամ պատուիրանս քո նոր, և հեռանալ
փախչիլ յամ առթից մեղաց, և պատ-
րաստել զանձն իմ մանաւանդ մեռա-
նել՝ քան միւսանգամ մեղանչել և վշ-
տացուցանել զքեզ. վասն մատչիմ այժմ

առ ոտս քո՝ ամ յանցանաց իմոց առ-
նել զխոստովանութի կատարեալ, և
յօժարակամ սրտիւ զառաջադրեալ
ինձ 'ի խոստովանութե զապաշխարու-
թիւն լիով կատարել։

Ու զի չունիմ ինչ քեզ վերընծայել
առ վճարողական բաւականութի իմոցս
պարտեաց, զիս բոլորովին հոգևոր և
մարմնաւոր կարողութիւնս 'ի պատարագ
ընդունելի, և զամ ինչ զոր կրեմ և
գործեմ 'ի փառս մեծիդ Աստ նուիրեալ,
մաղթեմ ընդունել ընդ պատարագի
խաչի զընծայս ինչին 'ի միութիւն ար-
դեանց որդւոյ քո ան մերոյ Յսի Ռսի,
որում ընդ քեզ և Հոգւոյդ սքանչելի
փառք իշխանութի և պատիւ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
Ամեն։

Աղօթք խոստովանութեան առաջ։

Ով բարեգութ ար իմ Յս Ռս, ա-
ղաչեմ զքեզ 'ի բոլոր սրտէ և 'ի բովան-
դակ մտաց, ընկալ զխոստովանութի
իմ,

իմ , զոր կամիմ առնել այսօր առաջի մեծվայելչութեանդ քո . և տուր ինձ զՇրշմարիտ և զկատարեալ զղջումն , ողբալ զամ մեղս և զյանցանս իմ : Ով ամենաքաղցր Յն , առաքեա 'ի հոգի իմ և 'ի միտս՝ զլոյս ճշմարտութեանդ քո , զի առաջնորդեալ ուսուցէ զիս կարող լինել յայս ահաւոր խարհուրդ ապաշխարութեանդ բեկեալ սրտիւ , կատարեալ սիրով , և ջերմեռանդն հոգւով մատչիլ , և պատմել առաջի քո մի ըստ միոջէ զամ մեղս և զյանցանս իմ . զի ընկալեալ զքաւութիւն մեղաց և զթողութիւն յանցանաց արդեամբք ամենաւր չարչարանաց քոց , արժանի եղէց փառաւորել զանուն քո նր 'ի յաւիտեան . Ամէն :

Աղօթք խոստովանութեան էութեան :

Ո՛զիցի քեզ տէր աղերսեմ հաճելի և ընդունելի այս խոստովանութիւն իմ արդեամբք ամենօրհնեալ ծնողի քո Մարիամու միշտ կուսին , և ամ սրբոց քոց . և եթէ պակասեցայ իւիք 'ի պահանջելոցն

առ բաւականութիւն զղջման, առ պարզութիւն աբտարերութեան, և առ ամբողջութիւն խոստովանութեան, յայսմ կամ յայլում նուէրագի, լցցէ զթութիւն քո և ողորմութիւն. զի մարդասիրութիւք քով յամ մասնակցութիւն մեղաց խորհրդոց բանից և գործոց՝ յերկինս և յերկրի արձակել զիս հաճեսցիս Դ՚ն ած, որ կենդանի ես և թագաւորես ընդ Հօր, և ընդ Սրբոյ Հոգւոյդ՝՝'ի յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Աղօթք:

Ով տէր իմ, ած իմ, և փրկիչ իմ Յն Դ՚ն, ընկալ աղաչեմ շնորհիւ ողորմութեան քո զխոստովանութիւն իմ, զոր արարի այսօր առաջի մեծվայելչութեան փառաց անուան քո. և զպակասութիւնս իմ, որովք պակասեցայ 'ի նմա՝ լցո՛ ամենատուր գթութեամբ քով. և շնորհեա՛ ինձ զներումն ամ յանցանաց իմոց, զի արժանի եղէց ընդունիլ զկենարար մարմին և զարիւն քո նբ՚ի փառս ԱՅ, և 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ. Ամէն: Ա-

Աղօթք հաղորդութեան առաջ։

Ո՛վ տէր իմ Յիսուս Քրիստոս, արդարև չեմ բաւական ընդունիլ զքեզ. այլ մի կարօտութեամբ իմով գամ առ քեզ, զի հիւանդութեան իմ քեւ բժշկեսցի, խաւարմտաց իմոց քեւ լուսաւորեսցի, աղքատութիւն իմ քեւ հարստասցի, և գործք իմ բարիք քեւ լեցին արդիւնաւոր. Ամէն։

Յիշեա՛ տէր, զի զքեզ ետուր 'ի մահ մի՛ մեռանիցես իմ, և զմարմին և զարիւն քո բաշխեցեր 'ի փրկութեան իմ. մի՛ լեցին սոքա ինձ 'ի դատապարտութեան, այլ 'ի քաւութեան և 'ի թողութեան մեղաց, յառողջութեան հոգւոյ իմոյ, և 'ի հանդերձեալ երանութեան իմ, մինչև տեսից զքեզ դէմ յանդիման, և զմայլեցայց փառաւոր ածութեամբ քո 'ի յաւիտեան. Ամէն։

Աղօթք աբեղն Գրիգորեանի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս ծանեայց զիս, և ծանեայց զքեզ։ Մի՛ լեցի ինձ բաղձալ

իմիք,

իմիք, բայց եթէ քեզ. որպէսզի կա-
ցից ատել զիս, և սիրել զքեզ.
խոնարհեցուցանել զիս, և բարձրա-
ցուցանել զքեզ. զոչինչ խորհիլ՝ բայց
եթէ զքեզ. մեռանիլ 'ի յիս, և կեն-
դանի լինել 'ի քեզ. և զամ պատա-
հար ընդունիլ 'ի սէր քո 'ի քէն. ար-
համարհել զիս, և հետևել քեզ, և
միշտ զնոյն բաղձալ. փախչել յինէն,
և առ քեզ դիմել, և պաշտպանութեանց
քոց արժանի լինել: Տուր ինձ զեր-
կիւղ քո նբ, երկնչիլ 'ի քէն իբրև որ-
դի 'ի հօրէ. տարաձայնիլ ախտից իմոց,
և համաձայնիլ քեզ. հնազանդիլ
զամ մարդկեղէն ստեղծուածոյ վս քո,
և մտանել 'ի թիւս ընտրելոց քոց:
Ընդհեա՛ ինձ զոչինչ իմիք բերկ-
րիլ, բայց եթէ քև. զայլ ոչինչ սի-
րել, բայց եթէ զքեզ, զի տեսանել
զքեզ, և ընդ սքս քո զմայլիլ քև
արժանացայց 'ի յաւիտեան. Ամէն:

Ուսկից էաթը գնա՛ սրբութիւն առնելու ջերմեռանդութեամբ, և հաւատով. ասելով.

Տարին ան մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցէ զհոգի իմ 'ի կեանս յաւիտենական։

Ով որ կը բաղձայ առաւել ջերմեռանդութիւն ընդունիլ սէր հաղորդութիւնը, թող աս վարի աղօթքներնալ զբուսցէ, և անանկ երթայ սրբութիւն առնելու։

Ընդ հաղորդութեանն առաջ։

Ահա առ քեզ գամ Տէր, զի բարի լիցի ինձ 'ի պարգևաց քոց, և ուրախ եղէց 'ի սէր կոչմանս քո. զոր պատրաստեցեր քաղցրութիւն քով աղքատի Ինձ։ Ահա 'ի քեզ է Տէր, որում ընդունանալ մարթիմ։ Դու կեանք իմ և

փրկութի՛ն, յոյս և զօրութի՛ն, վայելչութի՛ն և փառք։ Ուրախ արա այսօր զանձն ծառայի քո. զի առ քեզ ՝ի՛ն համբարձի զանձն իմ։ Փափագիմ արդ եռանդեամբ և յարգանօք զքեզ ընդունիլ։ Յանկամ զքեզ ՝ի տուն իմ տանիլ, զի ընդ Զաքէի արժանացայց ՝ի քէն օրհնիլ. և ըստ որդիս Աբրահամու համարիլ։ Ընձն իմ փափագէ մարմնոյ քում, և սիրտ իմ ցանկայ միանալ ընդ քեզ։

Տուր զքեզ ինձ, և շատ է. զի բաց ՝ի քէն՝ ոչինչ միսիթարութի՛ն արժէ ինչ։ Առանց քո լինել ոչ կարեմ. և առանց այցելութե՛ն քո կեալ ոչ զօրեմ։ Անայսորիկ պիտոյ է ինձ ստէպ առ քեզ մատչիլ, և ՝ի դեղ փրկութե՛ն իմոյ զքեզ ընդունիլ։ Զի դու ես քաղցր կերակուր հոգւոյ. և որ արժանապէս զքեզ ճաշակէ, բաժանորդ և ժառանգ լինի փառացն յաւիտենականաց։ Ինձ՝ որ յոլովակի գթեմն և մեղանչեմ, և վաղվաղ թմրիմ և նուազիմ, հարկ է ստէպ աղօթիւք և խոստովանութիւնք,

և ՝ի մարմնոյ քո ընդունելութիւնն նորոգիլ, սրբիլ, և վառիլ. զի մի յերկար հրաժարմամբ՝ յետնեալ գտայց ՝ի ՝ի առաջադրութենէ։

Էջ ԺԸ։

Ո՛վ քաղցր և մարդասէր տէր, զոր արդեւռանեղեամբ ընդունիլ ցանկամ, դու գիտես զտկարութիւն իմ, և զվիշտս զոր կրեմ. յորչափ չարիս և ՝ի մոլութիւս անկեալ դնիմ, որպէս յոլովակի ծանրիմ, փորձիմ, խռովիմ, և աղտեղանամ։ ՝Ի հնարս բժշկութենէ առ քեզ մատչիմ. զմխիթարութենէ և օգնականութենէ առ քեզ պաղատիմ։ Ու ամենագէտդ բարբառիմ, որում յայտնի են ամ ներքինք իմ. և որ միայն կարողդ ես լուսով զիս մխիթարել, և իմ լինել ձեռնկալու։ Դու գիտես, որոց բարեաց առաւելապէս կարօտիմ. և որպէս թափուրեմ յառաքինութենց։

Ահա կամ առաջի քո աղքատ և մերկ. զշնորհս քո հայցելով, և ողորմութի խնդրելով։ Կերակրեա զքաղ-

ցեալ մուրացիկ քո. ջեռո՛ զցրտութիւն իմ հրով սիրոյ քո. լուսաւորեա՛ զկուրութիւն իմ լուսով եկաւորութեանդ քո։ Դարձո՛ զայմ երկրաւորս ինձ 'ի դառնութիւն, զայմ ծանուցս և ներհակասն 'ի համբերութիւն, զայմ ստորինս և աւրարածականս յարհամարհութիւն և 'ի մոռացումն։ Ուղղեա՛ զսիրտ իմ առ քեզ յերկինս. և մի թողուր ինձ տատանիլ 'ի վերայ երկրի։ Դու միայն քաղցրասցիս ինձ յայսմհետէ մինչև յաւիտեան. զի դու միայն ես կերակուր և ըմպելի իմ. սէր և խնդութիւն իմ. քաղցրութիւն իմ, և ամենայն բարութիւն։

Նրանի՛ թէ յեկաւորութեանդ քում գլխովին զիս վառէիր, կիզուէր, և 'ի քեզ փոխարկէիր. զի մի լինէի ընդ քեզ հոգւով, շնորհօք սերտ միաւորութեամբ, և հալմամբ բորբոքեալ սիրոյ։ Մի՛ թողուր ինձ նօթի և պասքեալ 'ի քէն հեռանալ. այլ արա՛ ընդ իս մարդասիրապէս, զորսրինակ բաղում անգամ արարեր ընդ նբս քո սքանչելապէս։

պէս։ Օ՛ի՞նչ զարմանք են, թէ գլխովին քև հրանամ, և յիս նոճաղիմ. հուր գոլով քո մշտավառ և աննիւթ. սէր սրբարար սրտի, և լուսաւորիչ մտաց։

Աղօթք։

Ա՛ծաւ եռանդեամբ, և վառեալ սիրով, ախորժամամբ և տարփմամբ սրտի փափագիմ ընդունիլ զքեզ Տէր. զորս՝ ինակ բազում սէ՛ք և առաքինիք 'ի հաղորդիլ իւրեանց քեզ փափագեցին. ոչք մեծապէս սրբութի՛ւ վարուց քեզ հաճոյացան, և 'ի ջերմ եռանդն վառեցան։ Ա՛ծ իմ, սէր յաւիտենական, լրումն բարութե՛ն, երջանկութի՛ն անզրաւական. ցանկամ ընդունիլ զքեզ մեծ և ս տարփմամբ և արժանաւոր յարգանօք, քան զոր սէ՛ք երբէք կալան յանձինս։

Ա՛ւ թէպէտ անարժան եմ զայն Տամ եռանդն յանձին բերել. սակայն զՏամ զիմոյ սրտի ախորժակ քեզ մատուցանեմ, որպէս եթէ այն Տամ խան-

դաղակաթի ըղձից բորբոքք յիս միայն լինէին։ Բայց զոր ինչ հնար է բարեպաշտմտաց խորհիլ և փափագել, զայն ամ մեծաւ յարգանօք և ըղձմամբ սրտի քեզ ընծայեմ և մատուցանեմ։ Ոչինչ կամիմ անձին պահել. այլ զիս, և զամ որինչ է իմ, քեզ կամակար և մտադիր նուիրեմ։ Ընծ իմ, արարիչ իմ, և փրկիչ իմ, այնպիսի ըղձիւ և յարգմամբ, գոլութիւն և պատուով, այնպիսի գոհութիւն՝ մեծարանօք և սիրով, այնպիսի հաւատով յուսով և մաքրութիւն անձկամ ընդունիլ զքեզ այսօր, զորօրինակ ամենասէր մայր քո փառաւորեալ կոյսն Մարիամ յաւետել նմա հրեշտակին զմարդեղութիւն խորհուրդ՝ խոնարհութիւն եռանդեամբ և փափագմամբ ընկալաւ զքեզ։

Ընկալ զուխտս իմ, որ Ընծ իմ. և զիրաւս անչափ օրհնութիւնս, և անբաւ փառատրութիւնս, որ քեզն վայելեն, ըստ առաւելութեան անպատում մեծութիւնս քո։ Այս ամ քեզ փոխատրել ցանկամ յամ աւուրս և 'ի ժամանակս.

և հայցմամբ և ըղձմամբ հրաւիրանօք աղերսեմ զքեզ երկնային զօրս, և զքեզ հաւատացեալս 'ի քեզ, փոխատրել քեզ ընդ իս զշնորհակալութիւնս և զգովութիւն ոչիս, և յաւիտեանս. Ամէն։

Ընդ Հոգեպտուղն Եփրեմ։

Ով սո իմ Յն Քն, հաց կենդանի, և պարգևիչ կենաց ազգի մարդկան, սրտի մտօք շնորհակալ եմ զանբաւ մարդասիրութենէ քումմէ, որով արժանի արարեր զիս զմեղաւորս զմահու պարտականս հաղորդ լինել կենաց՝ կենարար մարմնոյ և արեան քոյ սրբոյ ճաշակմամբ։ Եւ արդ՝ արա՛ աղաչեմ սո, զի լիցի ինձ սա 'ի զէն հաւատոյ մտաց իմոց, և 'ի վահան ամրութենէ կամաց իմոց, յամբարձումն սրտի մտաց առ Ած, և 'ի լրումն ածային սիրոյ և պատուիրանաց, յապաքինութիւն ամ ախտից, և 'ի ծաղկումն հա-

մայն

մայն առաքինութեանց. յաներկեւանութի 'ի շաւիղս բարեգործութեան, և յաղաւոթի յի բաքանչիւր գրգիռ փորձութեն. զի 'ի քեզ և 'ի ճանապարհս արդարութեն քո խնդամիտ զուարթացեալ՝ աճապարեցից յերկնային հարսանիս քո, և հրաւիրելոց քոյոց սիրելեաց պարոց պարակից լեալ՝ փառաւորեալ զքեզ ընդ Հօր և ընդ սիր Հոգւոյդ աւժանի եղէց, որ ես լոյս ճշմարիտ, կեանք, քաղցրութի, և յոյս մեր 'ի յաւիտեան. Ամէն:

Աղօթք «Էյն Պօղէիարպոսի:

Այր միածնի որդւոյ քո Յեսի Քրիստի օրհնելոյ, օրհնեմ զքեզ, որ հաճեցար յայս օր հասուցանել զանձն իմ, 'ի լինել հաղորդակից մարմնոյ և արեան բաժակին օծելոյ քո, յանեղծութիւն Հոգւոյն սրբոյ. վասն որոյ յաղագս ամի զքեզ օրհնեմ, զքեզ բարեբանեմ, և քեզ փառս մատուցանեմ 'ի ձեռն մշանջենաւոր քահանայապետի Յեսի Քրիստի

Ամեն միածնի որդւոյ քո, որով և ընդ որում քեզ Հոգւով նբվ փառք այժմ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Աղօթք:

Օրհնեմ զքեզ Հայր երկնաւոր, Հայր ան իմոյ Յն Ամեն, որ հաճեցար յիշել զիս զտնանկս: Հայր գթութեանց և Աստ ամ մխիթարութեան, գոհանամ զքէն, զի զիս զանարժանս ամ մխիթարուեցեր՝ զօրացուցանես երբեմն մխիթարութիւն քո: Օրհնեմ զքեզ միշտ և փառաւորեմ ընդ միածնի Որդւոյ քո և ընդ Հոգւոյդ սրբոյ մխիթարչի յաւիտեանս յաւիտենից: Արդ տէր Աստ մարդասէր, յեկաւորիլ քո'ի սիրտ իմ, ցնծացեն ամ ոսկերք իմ: Դու փառք իմ, և ցնծութիւն սրտի իմոյ: Դու յոյս իմ և ապաւէն իմ յաւուր նեղութեան իմոյ:

Բայց քանզի դեռ տկար եմ'ի սէր, և անկատար յառաքինութեան, հարկ է ինձ'ի քէն քաջալերիլ, և մխիթարիլ. վասն որիկ այց արա ինձ ստէպ.

և ուսո՛ւցեր ինձ իմաստս նքա։ Պարեցո՛ զիս յախտից շարաց, և բժշկեա՛ զսիրտ իմ յամ անկարգ ըղձից. զի ներքոյ առողջացեալ, և քաջ մաքրեալ՝ եղէց դիպաւոր 'ի սիրել, և անվեհեր 'ի հանապազորդել։

Ունծաացի սէր քո 'ի սրտի իմում, զի թեւթեւացուսցէ զամ ծանրաբեռն, կրել ինձ հաւասար զամ անհաւասար, զբեռն բառնալ անբեռն, և զամ դառն՝ առնել ինձ քաղցր և անոյշ։ Ընդունակա՞ն է սէր քո Յիսուս. խրախուսել 'ի գործել ինձ զմեծամեծս. և յորդորել զիս միշտ ըղձանալ կատարելագունից։ Սէր քո 'ի վեր քարշեսցէ զիս առ քեզ, և մի թողցէ 'ի ստորինս փակիլ։ Սէր քո ազատ գրեսցէ զիս և յամ աշխարհային ախորժակաց ստար. զի մի ներքին նր տեսութի ինձ խափանեսցի. մի անցաւոր ինչ՝ դիւրութիք զիս թակարթեսցէ, կամ վշտօք վտանկեսցէ։ Դան զսէր քո չէիք ինչ քաղցր, Ո՞ւ իմ, չէիք ինչ զօրաւոր, չէիք ինչ վսեմական, չէիք ինչ անդորր, չէիք

ինչ

ինչ բերկրական, չկք ինչ պատարուն, չկք ինչ լաւ քան զնա յերկինս և յերկրի։ Օ՛ի սէր՝ի քէն ծնեալ է, և չկք նման հանգչիլ՝ բայց միայն՝ի քեզ՝ի վեր քան զամ արարածս։

Օրացո՛ Ա՛ծ իմ՝ի յիս զսէր քո սքանչ, զի՝ի ննջել իմում ոչ՝ի քուն մտից։ Աշխատեալ՝ ոչ պարտասեցայց. նեղեալ՝ ոչ տագնապեցայց. զարհուրեալ՝ ոչ խռովեցայց. այլ որպէս լոց բոլորքեալ և ջահ վառեալ՝ի վեր ցոլացեալ անվեհեր ընդ ամ անցանել կարացից։ Ա՛ծաբարբառ յականջս քո նոյն ինքն վառեալ խղճ սրտի իմոյ բողոքեցէ Ա՛ծ իմ, սէր իմ. դու իմ ես բոլորովին, և ես քո ամենևին։

Ընդ՝որը արա ինձ՝ի սէր. զի ուսայց բերանով սրտի ճաշակել, թէ՝ որպէս քաղցր է սիրել, և՝ի սէր անդ հալիլ և լուծիլ։ Կրակաւորեալ սիրով, եղեալ ըստ տահման անձին առ կարի եռանդեան և հիացման։ Երգեցից զերգ սիրոյ. զհետ երթայց սիրելւոյդ իմոյ՝ի բարձունս. նուճաղեսցի յօրհնութիւն

քո անձն իմ խանդաղակաթ սիրով։ Սիրեցից զքեզ առաւել քան զիս, և զիս միայն մեռ քո. և զամենեսին 'ի քեզ, որք ճշմարտութեամբ սիրեն զքեզ, որպէս հրամայեն օրէնք սիրոյ առ 'ի քէն ծագեալք։

Սէր քո սէ՛ր արարցէ զիս, արագ և անկեղծ. բարեպաշտիկ բերկրեալ և զուարթեալ, զօրաւոր, համբերող, հաւատարիմ, իմաստուն, երկայնամիտ, արի ոչ երբէք խնդրել զանձն իմ։ Օ՜ի ուր խնդրեցից զանձն իմ, անդէն անկայց 'ի սիրոյ։ Արարցէ զիս շրջահայեաց 'ի սէր, խոնարհ, և ուղիղ. ոչ թուլամորթ, ոչ թեթև, և ոչ սնոտիաբեր. այլ զգաստ, ողջախոհ, հաստատուն, հանդարտ, և յամ զգայարանս զգուշաւոր։ Սէր քո զօրացուսցէ զիս լինել հլու և հնազանդ առաջնորդաց. յաչս անձին խոտան և արհամարհ. յաչս քո ջերմեռանդն և հաճոյացեալ. վստահացեալ և յուսացեալ միշտ 'ի քեզ Աստ իմ, լոյս իմ, և սէր սրտի իմոյ. Ամէն։

Ամ-

Աղօթք։

Աղրդ միւսանգամ խօսեցայց ՝ի, և ոչ լռեցից. բարբառեցայց յանկնչս Աստ ի մոյ, ՝ն ի մոյ, և թագաւորի ի մոյ, որ էն ՝ի բարձունս։ Արդեսք զի մեծ է օրհնութիւն քաղցրութիւն քո ՝ի, զոր պահեցեր երկիւղածաց քոց։ Օ՝ինչ ես սիրողաց քոց, և որոց յամ սրտէ ծառայեն քեզ։ Ահա անճառելի է ճաշակ քաղցրութիւն քո, զոր առատաձեռնես ՝ի սիրելիս քո. յայսմ առաւելապէս ցուցեր զաւ ի զքաղցրութիւն սիրոյ քո. զի որ ոչն էր, արարեր զնա. և որ օտարացեալն էր ՝ի քէն, դարձուցեր զնս, ծառայել քեզ. և հրամայեցեր ինձ՝ սիրել զքեզ, և անապական մարմնով և արեամբ քով կերակրեցեր զնս։

Ո՝վ աղբիւր անսպառ սիրոյ, զի՞նչ ասացից զքէն։ Օ՝ի՞արդ իշխեցից մտանալ զքեզ, որ հաճեցար յիշել զնս՝ ես և յորժամ հիւծեալն էի, և ՝ի կորուստ մատնեալ։ Ա՝ վեր քան զամ ակնկալութի՝ արարեր ընդ ծառայի քում

քում ողորմութի. և քան զամ արժա-
նաւորութի՝ ցուցեր առ իս շնորհ և
բարեկամութի։ Օ՜ի՞նչ տաց քեզ տրի-
տուր փոխանակ շնորհիս։ Օ՜ի ոչ ամե-
նեցուն տուեալ է մերկանալ յանձնէ
զլաստ աշխարհի զբաղմունս գլխովին, և
'ի սէր ծառայութեան քո զքեզ պաշ-
տել միայն պարապիլ։ Ա՜եծ ի՞նչ է
ծառայել ինձ քեզ, որում ամ ա-
ռարածք պարտական են ծառայել։ Ա՜հ
մեծ ինչ թուի ինձ՝ ծառայել քեզ.
այլ այն թուի մեծ և զարմանալի, զի
զայսպիսի աղքատ և անարժան հաճե-
ցար ընդունիլ 'ի ծառայութի, և սիրե-
լեաց քոց ծառայից դասակցեցեր։

Ա՜հա քո է ամ, զոր ունիմ, և որով
քեզն ծառայեմ։ Դայց և այնպէս՝ դու
ինձ ծառայես, քան ես քեզ։ Ա՜հա
երկինք և երկիր, զորս 'ի սպասաւո-
րութի մարդկան արարեր, 'ի պատրաս-
տի կան. և օրըստօրէ զքո հրամայեալսդ
կատարեն։ Այլ ոչ այսչափ միայն, այլև
զհրեշտակս 'ի սպասաւորութի մարդոյ
կարգեցեր։ Այլ որ վերագոյնն է քան
զամ,

զամ, դու ինքն հաճեցար մարդկան ծառայել, և զանձն քո տալ՝ նց խոստացար. և այսօր՝ի սրտի իմում եկեալ բնակեցար։

Օ՜ի՜ նչ տաց տրիտուք ընդ բիւրուց բարեացս։ Ո՞տայր ինձ ծառայել քեզ զամ աւուրս կենաց իմոց։ Ո՞տայր ինձ, գէթ օր մի արժանի պաշտօն քեզ մատուցանել. որ արժանիդ ես ամ պաշտաման և պատուոյ, և անվախճան փառատրութեանն։ Ա՛հմարտապէս ուր իմ ես դու, և ես քո չնչին ծառայ. որ յամ զօրութէ պարտական եմ քեզ ծառայել, և ոչ երբէք լուել՝ի քումմէ փառատրութէ։ Ընդ այս հաճեալ եմ, և այսմ ցանկամ. և որ ինչ թերին է, զայն դու հաճեացիս լնուլ։

(Ն՝ ոչ՝ ՝է ԷՐՕՆԷ ԷՅԷՆ ԱՍԱՑԷՆ.)

Ո՞ՆԾ պատիւ և մեծ փառք են՝ քեզ ծառայել, և զամ վն քո արհամարհել։ Օ՜ի մեծ շնորհս ստացին, որք կամակար մնօք՝ քո ար ծառայութեանդ ընդ լծով մնանիցեն։ Օ՜քաղցր միսիթարութի ար ՝՝ոգւոյն գտցեն, որք վն սիրոյ

քո՝ յամ մարմնական բերկրութեց 'ի բաց կացցեն: Եւ 'ի մեծի ազատութեն մտաց վայելեսցեն, որք վասն անուանն քո յանձուկ ճանապարհ մտանիցեն, և յամ աշխարհային հոգոց հրաժարեսցին:

Ով հաճելի և քաղցր ծառայութեան քո Աստ իմ, որով լինիմք ճշմարտապէս սրբ և ազատ: Ով սրբանուէր պաշտաման կրօնաւորական կարգիս, որ առնէ զմեզ հրեշտակաց հաւասար, քեզ միայնոյ Աստ հաճոյ, դիւաց ահաւոր, և ամ հաւատացելոց գովելի: Ով փարելի և յաւէտ ըղձալի ծ սուայութես քո ամ, որով լինի մեզ արժանանալ գերակայ բարութեն, և անվախճան խնդութեան 'ի փառս արքայութեն տերամբ մերով Յեսու Քրիստոս. Ամէն:

ԱՂՕԹՔ ԱՌԱՔՕՏԵԱՆ։

Լինք յառնելոյ 'ի քնոյ՝ առեալ զբանեալ ջուր՝ կինչեա զիրեալ նշանաւորէին, և ասեն.

Տէր՝ եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Օ՜մ գործս՝ զորս գործեմ այսօր, մինչև զբնականս ևս, բաղձամ տէր կարգել 'ի փառս քո։

Եւ յետ զգենլոյ զհագուստսն՝ ծանր եղեալ 'ի վերոյ երկրի, հաստատեալ զոյն, և ասեն.

Երկիրպագեմ քեզ Հայր Որդի և Հոգի իմ, և օրհնեմ զքեզ. որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս. աղաչեմ զքեզ, պահեա զիս այսօր ամենազօր աջովդ քով, զի մի մեղայցս քեզ խորհրդով, կամ բանիւ, կամ գործով, և կամ զանցառութիւն։

Յեր լուանալոյ ձեռքեր՝ ասա.

Այր ամենակալ Աստ յաւիտենական. աւասիկ տարածեալ զանձն իմ առաջի անչափ մեծութեանդ փառաց քոց՝ խոնարհութիւն երկիրպագանեմ քեզ. և մատուցանեմ ինդ իմում այսօր զամ զխորհուրդս, զբանս, և զգործս իմ. և ցանկամ առնել զամ ինչ 'ի սէր քո, և 'ի փառս անուան քո, 'ի ընուել զածային կամս քոյ, 'ի պաշտել, յօրհնել, և 'ի փառաւորել զքեզ:

Եւ արդ՝ տէր բարերար՝ ընկալ զյօժարութիւն սրտի իմոյ. և օժանդակ լեր տկարութեանդ և տարտամութեանդ իմում. և կենարար հեղմամբ արեան միածնի քո՝ պտղաբերեա յանդաստան սրտի և կամաց իմոց զկենդանի գործս բարեաց, 'ի փրկութիւն իմ, և 'ի հաստատումն ածային արդարութեանդ քո յաղագս մեղաց իմոց:

Աղօթք։

Փառաւոր թագաւորաց, Աստ ստեղծօղ, Տէր և արարիչ, Հայր և Որդի և սուրբ Հոգի, երրորդութեան և մի աստուածութեան, զքեզ խոստովանիմ բոլորով սրտիւ իմով, դաւանիմ և երկիրպագանեմ. որ յոչնչէ գոյացուցեր զիս. որ ստեղծեր զհոգի և զմարմին իմ. և Դամ բարեօք զիս զարդարեցեր, պահեցեր, պահպանեցեր, սիրեցեր, և նախախնամեցեր, տածեցեր, և սիրեցեր. յամ վասանգի ինձ օգնական եղեր, և յամ կարևորութեանն ինձ 'ի թիկունս հասեր. յամ տրտմութեանն զիս մխիթարեցեր, և յամ փորձութեանց զիս ազատեցեր, և մինչև ցայս կէտս պատսպարեցեր. տեսանելով զանօրէնութիս իմ՝ ներեցեր. զապերախտութիւնք իմովք զանց արարեր. և առաւել քան զբազումս որք զարդիւնս ունին առաջի Դաստուծոյ՝ պաշտպանեցեր. և յայս ժամ առաւօտուս ժամանեցուցեր։ Փառք, և գոհութիւն, և երկրպագութիւն, և շնորհակալութիւն

ստեղծողիդ իմոյ Աստ, Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Նոյ, միոյ, ճշմարտի, կենդանւոյ, և յաւիտենականի. Ամէն:

Գոհանամ, և մեծացուցանեմ, և փառաւորեմ զքեզ Տէր Աստ իմ յաղագս անչափ բարերարութեանց քոց՝ զորս առարերընդ իս ընդ անարժան ծառայ քո. քանզի ստեղծեր զիս յոչնչէ ըստ պատկերի քում և ըստ նմանութեան, տալով ինձ միտս՝ առ 'ի ճանաչել զքեզ, կամս՝ առ 'ի սիրել զքեզ, և զյիշողութիւնս՝ առ 'ի յիշատակել զբարերարութիւնս քո որ առիս, և գոհանալ զքէն, և զայլ բազում ձիրս մեծամեծս բնութեան և շնորհաց. ետուր և զկարողութիւն զգայութեանց առ 'ի ծառայեցուցանել քեզ, և զայնս առողջ և ամբողջ. և 'ի վերայ այսր ամի՝ զամ արարածս կարգեցեր 'ի ծառայութիւն ինձ, զի և ես պաշտեցից զքեզ սրբութիւնք և արդարութիւնք: Եւ ոչ շատացեալ այսու, 'ի վախճան ժամանակիս՝ մինդ յերից անձանց, ՝ի բանդ ած եկեալ յաշխարհ, մարմնայար, մարդացար, և ցուցեր ինձ զճանա-

նա-

նապարհ փրկութեան որ վարուք և վարդապետութիւն. և չարչարանօք և մահուամբ քով ազատեալ 'ի դերութէ դիւաց զհոգիս որ հարցն մուծեր 'ի դրախտն զոր բացեր. որով և ինձ զմուտն 'ի յաւիտենական կեանսն ցուցեր: Հաճեցար ևս տէր իմ ծնանիլ ինձ 'ի հաւատացեալ և յուղղափառ ծնողաց:

Լ. ՈՉ. 'Ի վերայսր ամի՝ ոչ յաղագս էմոց ինչ արդեանց, այլ վասն բազումս գթութեան քո հանեալ զիս յաշխարհէ՝ ածեր յայս կրօն ՝նբ, զանց արարեալ զբազում հաստակակցօք իմովք. յորում արարեր ինձ մեծամեծ բարիս հոգւոյ և մարմնոյ:

Սնուցեր զիս հոգևոր և մարմնաւոր կերակրովք, մխիթարեցեր, պահեցեր, և պահպանեցեր յամ վտանգից. և բազում անգամ երկայնամիտ լինելով մեղաց իմոց ետուր ժամանակ ապաշխարութեան: Լ. ևս առաւել գոհանամ զքէն տր, զի յայսմ գիշերիս առողջ և անսասան պահելով զիս յամ վտան-

գից հոգւոյ և մարմնոյ՝ յայս ժամ առաւօտուս ժամանեցուցեր առ'ի օրհնել զանուն քո սբ։ Արդ՝ ընդ լուսանալ առաւօտուս ծագեա՛ յիս տր զլոյս շնորհաց քոց, զի գնացից ընդ ճանապարհ պատուիրանաց քոց անսայթաք։

Այլ քանզի հաճոյ է քեզ հաւատոյ ներգործութիւնն ընդ յուսոյ և սիրոյ, նմին լրի'ի սկզբան աւուրս հաւատամ տր'ի միութի Աստ, և յերրորդութի անձանց, և'ի մարդեղութի բանին, և'ի դատողական իշխանութի նորա, որով զարդարս պսակէ, և զմեղաւորս պատժէ. և միանգամայն հաւատամ ամ մասանց հաւատոյ, որպէս հաւատայ և իմանայ և մեկնէ մայր մեր սբ Եկեղեցին հռովմէական։

Յուսամ տր օգնութիւն շնորհաց քոց ստանալ զխոստացեալ բարիսն երկնայինս, և ընդունիլ զհարկաւորս առ փրկութի իմ, այս է՝ զթողութի մեղաց, և զզօրութի յաղթահարելոյ զախտս իմ, և զայլ ամ զժուարինս պատահեալս ինձ։ արդեամբք չարչարանաց ծն մերոյ Յիսուսի։

Սի-

Սիրեմ զքեզ Տէր յամ անձնէ իմմէ՝ յամ մտաց իմոց, և յամ զօրութենէ իմմէ. 'ի նշան որոյ ջանամ պահել զպատուիրանս քո, և զգուշանալ 'ի մեղաց (մանաւանդ. յայս ինչ մոլութիւնէ). և առաւել կամիմ մեռանիլ բիւրիցս՝ քան դառնացուցանել զքեզ մեղօք. յանձն առնում զնեղութիս. այլև սիրեմ զընկերն իմ 'ի սէր քո իբրև զանձն իմ։

Եւ զի առ 'ի կատարել այսմ բարւոյ չեմ բաւական, քանզի առանց քեզ զոչինչ կարեմ առնել, վնորոյ աղաչեմ տալ ինձ զշնորհս քո՝ որով ամի կարող եղէց։

Ո. կատարումն այսց խնդրուածոց չունիմ զայլ ոք զօրեղ բարեխօս, բայց եթէ զքեզ Տէր Ծածին. ուստի զդէմս իմ յերկիր եդեալ՝ պաղատիմ մօրդ Յնի, զի ընկալցիս 'ի սիրելի որդւոյդ քումմէ վասն իմ զշնորհս հեզութեն, համբերութեն, և առաւել զխոնարհութեն, զոր ունէիր 'ի գերագոյն աստիճանի՝ որով եղեր մայր Տ.Յ։

Ընկանիմք առաջի քո Ամենածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ։ Բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեաւ զմիածին որդւոյդ։ Փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամ վտանգից մերոց։

Ամէն։ Հայր մեր, Ի քրիստոս Աղօթս 'ի պատիւ սրբոյն Գրիգորի։

Յայսմ վայրի հանուրս զմարս աստուծէալ զպատկառելիսդ յոր 'ի սուրբ-ելիսն 'ի պիտրոնելիսն յաճախակի սահեա, սաստկացարձեա զողորմութիւն քո ի շնորհս Աստ։ Ամէն։ Ամէն յանդնեալս զքեզ ամենայն, և պատհասեալս հրեշտակիդ, և պաշտեալս սրբոյդ. սակայն զի Հայր մեր և զի Աղօթս սրբոյն սրբոյ հոյսն, և զի Հայր մեր և զի Աղօթս սահեալն հրեշտակին ցս, և զի Հայր մեր և զի Աղօթս սաստկացեալն ամենայն ցս, և զարդարեալն՝ որ զինեալ։

Աղօթք յանձնարարութեան առ Աստուած։

Ամենասուրբ կոյս Մարիամ մայր Աստուծոյ, թագուհի երկնից, բարեխօսող մեղաւորաց, և ապաւէնդ նեղելոց. ես թէպէտ չեմ արժանի լինել ծառայ քո, բայց ստիպեալ 'ի փափագանաց ծառայելոյ քեզ, և ապաւինեալ 'ի հզօր զօրութիդ քո, ընտրեմ զքեզ այսօր առաջի պահապան հրեշտակի իմոյ, և ամ երկնային զօրաց, ինձ սեփական տիրուհի, նպաստ, և մայր, և յօժարակամ սրտիւ մատուցանեմ զանձն իմ 'ի հանապազորդ ծառայութիւն քո. և փափագիմ զի և այլք արասցեն զնոյն։

Արդ խնդրեմ 'ի քէն մայր բարեգութ միջնորդութիւն կենարար ապեան որդւոյ քո միածնի հեղւոյ յերկիր վասն իմ, ընդունիլ զիս 'ի թիւ բարեպաշտ պաշտօնասիրաց քոց 'ի մշտնջենաւոր ծառայ, և առաջնորդել ինձ 'ի գործս իմ։ Միջնորդեա՛ վասն իմ առ Նա տալ ինձ շնորհս, որով հաճոյ եղէց յամենամաքուր աչս

քո, եթէ խորհրդով, եթէ բանիւ, և եթէ գործով. և առաջի դատաւորին իմոյ և փեսայի, և քո միածնի գտայց անարատ։ Յիշեա՛ զիս մայր ողորմութեան, և մի՛ ընկենուր յերեսաց քոց՝ ի ժամու մահուան իմոյ, մինչև մեկնեսցի հոգիս՝ ի մարմնոյ աստի տառապանաց ճշմարիտ ապաշխարութեամբ յանցանաց իւրոց. Ամէն։

Աղօթք առ պահապան հրեշտակին։

Աղաչեմ զքեզ ո՛վ հրեշտակ իմ պահապան, որ կարգեալ ես՝ ի ծննդենէ իմմէ առ՝ ի խնամոցն Աստ՝ ի պահպանութիւն, և՝ ի նախախնամութիւն անձին իմոյ անարժանի. զի պահեսցես զիս այսօր՝ ի պատրանաց թշնամւոյն, զորօրինակ պահեցեր յայսմ գիշերիս. և տացես ինձ զօրութիւն սրբոյ խաչին յաղթահարել զամ ցանկութիւն մարմնական, զամ հպարտութիւն կենցաղոյս, և զամ խաբեութիւն հնոյ օձին. Ամէն։

Աղօթք առ պաշտպան անձն։

Ո՛վ երանեալ և փառաւորեալ նբ (Ա.Գ.) փաստաբան և սիրելի խնամակալու իմ, զոր ընտրեցի ինձ այսօր պաշտպան և բարեխօս. յանձն առնեմ զիս 'ի բոլոր սրտէ քոյդ հզօր հովանաւորութենէ, և ապաչեմ խոնարհաբար, հայցել ՅԱՆ վն իմ զթողութի մեղաց, և զյարատևութի 'ի գործս բարեաց։ Ո՛վ երջանիկ նբդ Ա.Յ, լեր ինձ ձեռնտու այսօր և զամ աւուրս կենաց իմոց առ 'ի ազատել զիս յամ վտանգից հոգւոյ և մարմնոյ, և պահել յամ առթից վշտացուցանելոյ զմր, զի քոյով օժանդակութբ կեցցեալ բարի վարուք մինչև ցվախճան, և բարեհրաւէր մահուամբ՝ զինեալ նբ խորհրդովք Ն.կեղեցւոյ, քոյով առաջիկայութբ ելից 'ի կենաց ատի, և 'ի ձեռն բարեխօսութենէ քո արժանի եղէց զկնի ատեանցս ուրախանալ ընդ քեզ 'ի փառս երկնից արքայութենէ, արդեամբք շարչարանաց ՅՆՍ ՔՐՍՏՈՅ. Ամէն։

Աղօթք աջոյն Յովհաննէսի Աստուածաբանի՝ ընդ սատանայէն։

Զարարիչ անճառելի, որ 'ի գանձուց իմաստութեան քո զերիս քահանայապետութիւնս հրեշտակաց հաստատեցեր, և զնա 'ի լուսեղէն խորանան երկնից հրաշափառապէս դասակարգեցեր. միանգամայն և զամ տիեզերս վայելչապէս հանդերձեցեր, և որ եսդ ճշմարիտ լուսոյ և իմաստութեան աղբիւր, և գերագոյն նախատիպն. հեղ 'ի խաւարեալ միտս իմ զնշոյլս պայծառութեան. և փարատեցո՛ յանձնէ իմմէ զկրկնակի խաւարն բնածին, զմեղս՝ և զանգիտութիւն։ Դու՝ որ զլեզուս տղայոց դնես պարզախօս, վարժեա՛ զլեզու՝ իմ. և լից օրհնութիւնս շնորհաց քոց զշրթունս իմ։ Տո՛ւր ինձ զայրութիւն լմանալոյ, զընդունակութիւն պահելոյ, զկորովամտութիւն մեկնելոյ, զիւրընկալութիւն ուսանելոյ, և զամենաւատ շնորհս խօսելոյ։ Կազմեալ յարդարեա՛ զմտաւս իմ. ուղղեա՛ զգնացս իմ, և կատարեա՛ զելս իմ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. Ամէն։

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵՆԱՆ։

Ընբաւելի բարութի. սրտի մտօք գոհանամ զքէն 'ի վր՝ ամ բարերարութենց քոց, զորս առ իս անարժանս երևեցուցեր զամ աւուրս կենաց իմոց, և մանաւանդ այսօր խնամարկեցեր զիս հոգևոր և մարմնաւոր կերակրովք առատապէս. և ամբողջ անսասան ժամանեցուցեր յայս ժամ երեկոյիս։ Եղիցի քեզ օրհնութի և փառք յամ ընտրելոց քոց յերկինս և յերկրի, և յամ արարածոց յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ արդ՝ տէր ամենակալ, եթէ արարի ինչ բարի այսօր առաջի քո, 'ի քէն է այն. ուստի զքոյն 'ի քոյոցս քեզ մատուցանեմ. իսկ եթէ չար՝ այն յինէն է։ Այլորոյ աղաչեմ զքեզ, քաց զմիտս իմ, զի ծանեայց զյանցանս իմ, զորս խորհրդով բանիւ և գործով արարի ընդդէմ մեծվայելչութենք քո։ Այս տուր ինձ աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ։

Յետ

Յեր տյուրքի պնդաւ ած զամ հեղը զո,
զոր տրտրէր յաւաւօրէ հինչ-
յերէիոյ, ի զգնոլով ասաւ.

Յաւիտ տէր մեր օրհնոյ քո 'ի վերայ այսչափ անօրէնութեանց՝ զորս արարի այսօր ամենահամարհելով զանչափ բարութիւն քո. յառաջադրեմ այսուհետև ոչ ես մեղանչել, և զգուշանալ 'ի մեղաց (մանաւանդ յայս ինչ մեղաց, և յառաքիցն նոր): Եւ քանզի չեմ կարող զայս առնել յինէն, ուստի աղաչեմ, առաքեա առ իս զշնորհս քո ամբ, որով զօրեցիս կատարել: Յանձն առնեմ քեզ տէր 'ի պահպանութիւն զհոգի և զմարմին իմ:

Աղաչեմ և զքեզ մայր Աստուած, և զամբ հրեշտակդ իմ պահապան, զպաշտպան սրբդ իմ, և զամ ամբս՝ որ անդադար օրհնէք զԱստուած, մինչ ես սակաւիկ ինչ հանգչիմ ննջելովս, դուք խնամեսջիք զիս, և յանձն արասջիք Աստուծոյ, զի պահեսցէ զիս յայսմ գիշերիս յորոգայթիցն հիշնամեաց իմոց, որք 'ի ննջելն մեր միշտ ոգնին, պատրաստ առ 'ի վնասել մեզ:

Նշի-

Եղիցի Ընծ պաշտպան իմ, և ոչինչ հակառակութի մեղիցէ մեզ։

Ընդ՝ սրբոյն հոյսն։

Սրբուհի կոյս Մարիամ, ամենաքաղցր թագուհի շնորհաց, բարեխօսդ մեղաւորաց, և ապաւէնդ նեղելոց. հայեաց գթութիւն 'ի մաղթանս անարդ ծառայի քո, և համարեա զիս 'ի թիւս սիրելեաց քոց, և ամփոփեա զիս 'ի կուսական գիրկս քո։ Ով ամենամաքուր կոյս, մաքրեա զսիրտ իմ յամ մեղաց. ընկեա և թօթափեա յինէն զամ որ ինչ ոչ է հաճոյ առաջի աչաց քոց. սրբեա զսիրտ իմ յամ երկրաւոր ցանկութենց, և վերացո զսիրտ իմ 'ի սէր երկնային և յաւիտենական բարեաց։ Ով ամենաանբ կոյս, բարեխօս լեր վս իմ առորդիդ քո այժմ, և միշտ, և 'ի ժամու մահուան իմոյ, զի միջնորդութիւն քով ազատեցայց 'ի յաւիտենական հրոյն, և յետ աստեաց թշուառութենէ քն զմայրեցայց 'ի դրախտին։ Եւ ապ՝ մի

դարձուցաներ յինէն զաչս շնորհաց քոց ով ամենամաքուր տիրուհի և կոյս, զի 'ի գթութի քո զհոգի և զմարմին իմ առնեմ ապաստան։

Խուժացիր փրկել զիս յամ չարեաց և 'ի կասկածանաց աստեաց կենցաղոյս, և լեր բարեխօս վասն իմ առորդիդ քո միածին՝ շնորհել ինձ զթողութիւն յանցանաց, զհաւատս ճշմարիտ, զյոյս հաստատուն, զեռանդն սիրոյ, և զշնորհս Հոգւոյն սրբոյ՝ 'ի լնուլ զամենայն հաճութի կամաց իւրոց. և գթասցի պահել զքաղաքս զայս 'ի պատերազմէ, 'ի մահտարաժամէ, և 'ի սուրբ. և ազատեսցէ զիս, և զամ ազգս, և և զբարեկամս իմ, և զամ հաւատացեալ քրիստոնեայս յամ չարէ. Ամէն։

Ամէն

Ընդ սոսա զրկիցդարձ, եւ զիմ սոսա-
գրեսցիս։ Եւ զերեսս իմոյ հերք եւ զերեսս
Աղբարոյն ի զարդարիս սահմանէր Երբրարդա-
ղեսն։ Զի իմոյ հերք եւ զի Աղբարոյն
սա սրբեսցի հոյսն։ Զի իմոյ հերք եւ
զի Աղբարոյն սա զարհուրեսցեն հրեշտակքն։
Եւ զի իմոյ հերք եւ զի Աղբարոյն
սա զարշելիսցեն երեսն։

Եւ սակս զանազանս սա ի Ընծայիցն։

Գաղաչեմ զքեզ սուրբ Ընծայն, թագուհի երկնից, որ զարարիչն երկնի և երկրի կուսական կաթամբ սնուցեր. հայցեա՛ զմեզ իմ՝ի միածին որդւոյ քումմէ զթողութեան ամ մեղաց իմոց, զորս՝ի ծննդենէ սկսեալ աւազանին մինչև ցայժմ արարի, կամաց և ակամաց, գիտութեամբ և անգիտութեամբ։ Մի թողուր զիս ըստ կամս անձին իմոյ գնալ։ Դարձո՛ զիս՝ի չար սովորութենց իմոց՝ի բարի սովորութեան. բեւեռեա՛՝ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենացն. զի յրլենս ան կեցեալ արժանի եղէց գրել՝ի դպրութեան կենաց։

(Նա՝ ոչ՝ 'ի ինքն էին ասասցէն .)

Օրհնեա՛ և հաստատեա՛ զմիաբանութիւնս մեր , որպէսզի անքակտելի սիրով ամրացեալ՝ լիցի 'ի դրանց դժոխոց անվանելի ։ Պահպանեա՛ զմեզ 'ի գիշերիս յայսմիկ՝ նշանաւ նոյ խաչին՝ 'ի հրապուրանաց մեղաց , 'ի փորձութեանց դիւաց , և յամ վտանգից հոգւոյ և մարմնոյ , զի 'ի սփոփումն տկարութեան մերոյ հանգուցեալ՝ կանխեսցուք անարատ հոգւով և մարմնով յօրհնաբանութիւն ամենաւոր Երրորդութեանդ . որում վայելէ փառք , իշխանութիւն , և պատիւ . այժմ , և միշտ , և յաւիտեանս յաւիտենից . Ամէն ։

Նա՝ ասէաց զքա՝ զ օրհնութիւնքն , խաչանշանելով զսիրտ՝ զանձիոցն՝ , ասէլով ։

Յողեա՛ յիս միշտկաւ , և որ եղէց . լուսա՛ և քան զձիւն սպիտակ եղէց ։

Խաղաղութիւն յայս և 'ի սոյն ննջեցցուք , և զարթիցուք , զի դու որ միայն ապանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ ։

Նա՝

Եւ նոքա բան 'ի բանէ լքեալ՝ հրամայէին
զաղաչաւորսն Յեսու, զի զայլ
հոգեւոր ինչ։

ԵՑԼ ԵՊՀՕԹՍ. ԵՒ ԿՈՅՆԵԱՆ։

Նոքա սաւ զՀրեշտակն ասն. և ապա
ակնէաւ սառնել զյէրուսղեայ պօղն։

Լաւատով խոստովանիմ և երկիր-
պագանեմ քեզ Հայր և Որդի
և սբ Հոգի. անեղ և անմահ բնու-
թիւն. արարիչ Հրեշտակաց, և մարդ-
կան, և ամ եղելոց. և ողորմեա՛ քո
արարածոցս։

Լաւատով խոստովանիմ և երկիր-
պագանեմ քեզ անբաժանելի լոյս, մի-
ասնական սբ Երրորդութի և մի ածու-
թիւն. արարիչ լուսոյ և Հալածիչ խա-
ւարի. Հալածեա՛ 'ի Հոգւոյ իմմէ զխա-
ւար մեղաց և անգիտութե. և լուսա-

ւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի Հաճոյս. և ընդունիլ 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա ինձ բազմամեղիս։

Այր երկնաւոր Ը. ծ ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քոյ. ընկալ զիս ոչ զանասակ որդին. և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. և ողորմեա՛ քո արարածոցս, և ինձ բազմամեղիս։

Որդի Ը. Յ Ը. ծ ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար, և թաղեցար, և յարեար 'ի մեռելոց, և համբարձար առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քոյ. յիշեա՛ զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեանդ քումդ. և ողորմեա՛ քո։

Ողի Աստուած Ճշմարիտ, որ ինքեր 'ի յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քոյ. մաքրեա զիս վերստին ածային հրով քով, որպէս հրեղէն լեզուաւքն զառաքեալսն. և ողորմեա՛ քո։

Աստուած հինգ պատանեաց՝ զնա՛ յոգոցին, զի հոմանգամոյն պատանոլինէ հաւատոյ. և հոմանգամոյն ապօրէ ղղջման, որպէս Խոստովանիմ առաջի Աստուծոյ. զոյգ որ հոմի, զէոլանգամոյ ինքն պատանեն ասասցէ։

Տէրեք Ողջոյն, և երեք Հայր մեր ասասացուք 'ի փառս և 'ի պատիւ ամենասրբ Երրորդութեանդ, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Հայր մեր որ յերկինս ես. Խոյնն.

Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք. Խոյնն։

Սրբ Աստուած, Սրբ և հզօր, Սրբ և անմահ ողորմեա՛ց մեզ։ Երիցս հրէշտա՛։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ ՝ի կոյս աստուածին Մարիամ մայր Աստի, մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քոյ և Աստ մերոյ :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Ամ՝ սրբուհի աստուածածին :

Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք, տէր ընդ քեզ. Խայլն :

Տէր ողորմեա՛ց :
Քրիստոս ողորմեա՛ց :
Տէր ողորմեա՛ց :
Քրիստոս լուր մեզ :
Քրիստոս անսա՛ մեզ :
Հայր երկնաւոր աստուած. ողորմեա՛ց մեզ :
Որդի փրկիչ աշխարհի աստուած. ողորմ :
Հոգիդ սրբոյ աստուած. ողորմ :
Սուրբ Երրորդութիւն մի աստուած. ողորմ :
Սրբուհի Մարիամ. աղաչեա՛ վասն մեր :
Սուրբ Աստուածածին. աղօ :

Սուրբ

Եւ կոյս կուսանաց. աղօ:
Այր Ռեմ. աղօ:
Այր ամծային շնորհաց. աղօ:
Այր մաքուր. աղօ:
Այր սուրբ. աղօ:
Այր անարատ. աղօ:
Այր անբիծ. աղօ:
Այր սիրելի. աղօ:
Այր սքանչելի. աղօ:
Այր արարչին. աղօ:
Այր փրկչին. աղօ:
Կոյս իմաստուն. աղօ:
Կոյս յարգոյ. աղօ:
Կոյս քարոզելի. աղօ:
Կոյս հզօր. աղօ:
Կոյս գթած. աղօ:
Կոյս հաւատարիմ. աղօ:
Յայելի արդարութեամբ. աղօ:
Ընթոռ իմաստութեամբ. աղօ:
Պատճառ մերոյ խնդութեամբ. աղօ:
Ընօթ հոգեւորական. աղօ:
Ընօթ պատուելի. աղօ:
Ընօթ ընտիր ամծպաշտութեամբ. աղօ:
Վարդ խորհրդական. աղօ:

Աշտարակ զաւթեան. աղօ:
Աշտարակ փղոսկրեայ. աղօ:
Տուն ոսկեղէն. աղօ:
Տապանակ ուխտի. աղօ:
Դուռն երկնից. աղօ:
Աստղ առաւօտեան. աղօ:
Առաջնորդի հիւանդաց. աղօ:
Պաստան մեղաւորաց. աղօ:
Մխիթարիչ վշտացելոց. աղօ:
Օգնական քրիստոնէից. աղօ:
Մատուռի հրեշտակաց. աղօ:
Մատուռի նահապետաց. աղօ:
Մատուռի մարգարէից. աղօ:
Մատուռի առաքելոց. աղօ:
Մատուռի մարտիրոսաց. աղօ:
Մատուռի խոստովանողաց. աղօ:
Մատուռի կուսանաց. աղօ:
Մատուռի ամ սրբոց. աղօ:
Դառն Աստ, որ բառնաս զմեղս աշխարհի. խնայեա՛ի մեզ տեր:
Դառն Աստ, որ բառնաս զմեղս աշխարհի. անսա՛ մեզ տեր:
Դառն Աստ, որ բառնաս զմեղս աշխարհի. ողորմեա՛ց մեզ:
Յե՛ւ լուր մեզ: Յե՛ւ անսա՛ մեզ: Ա-

Աղօթք։

Աստ անճառելի ողորմութեանդ, որ ոչ միայն մարդ, այլև որդի մարդոյ լինել հաճեցար. և ծնանելով 'ի կուսէ զմայր 'ի յերկրի ստացար, որ զԱստ ունէիր հայր 'ի յերկինս. տուր մեզ աղաչեմք զյիշատակ նորա յօժարութիւնք կատարել. զմայրութիւն նորա գեղեցագոյն յարգանօք պատուել. գերազանցագոյն վսեմութեանդ նորա զմեզ խոնարհութիւնք հպատակել. որ զքեզ Հոգւով սրբով յղացաւ. զքեզ կուսութիւնք ծնաւ. և զքեզ 'ի յերկրի ինքեան հնազանդ կալաւ, զտիրդ մեր Յն Քն։ Որ կենդանի ես և թագաւորես ընդ Հօր և ընդ սքեայ Հոգւոյն 'ի յաւիտեանս. Ամէն։

Ընդ հովանեաւ պաշտպանութեանդ քոյ ապաւինիմք սքբ Աստուածին, մի՛ անտես առներ զաղաչանս մեր 'ի կարիս մեր. այլ միշտ փրկեա՛ զմեզ յամենայն վտանգէից, կոյս ամենապատուական և ամենօրհնեալ։

Ողջ-

Ո՛ղջ լեր թագուհի մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն, և յոյս մեր. ողջ լեր։ Ընդ քեզ գոչեմք աքսորեալ որդիքս Եւայի. առ քեզ հառաչեմք հեծելով և ողբալով յայսմ արտասուաց վայրի։ Արդ՝ ով բարեխօս մեր, դարձո՛ առ մեզ զաչս ողորմութեան քո. և զ՚Յիսուս զօրհնեալ պտուղն որովայնի քո յետ այսր աքսորանաց ցոյց մեզ, ով զթած, ով բարեգութ, ով քաղցր կոյս Մարիամ. աղաչեա՛ վասն մեր սրբ Աստուածին. զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի. Ամէն։

Ընկանիմք առաջի քոյ Աստուածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ։
Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց, և աղաչեա՛ զմիածին որդիդ։
Փրկել զմեզ 'ի փորձութենէ, և յամ վտանգից մերոց։

Մ՚էկ Ողջոյն, և մէկ Հա՛յր մեր յերկինք ասասցուք առ պահապան հրեշտակն մեր։

Հայր մեր որ յերկինս ես, սքանչելի։
Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք։

Ի՜ սոպ.

Ով հրեշտակ Աստծոյ, որ պահապան իմ ես, զիս զյանձնեալս քեզ վերնական գթութեամբ, լուսաւորեա՛ յայսմ գիշերի. ուղղեա՛, հովհանեա՛, և կառավարեա՛.

Ամէն։

Մէկ Ողջոյն, և մէկ Հայր մեր յերկինք աստացուք առ սքանչելի Գրիգոր լուսաւորիչն մեր վասն լուսաւորութեան, և բարեյաջողութեան ազգիս մերոյ։

Հայր մեր որ յերկինս ես, սքանչելի։
Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք։
Մէկ Ողջոյն, և մէկ Հայր մեր յերկինք աստացուք առ սքանչելի Նարեկացի Գրիգոր, որպէսզի պահեսցէ զմեզ 'ի կրակէն։

Հայր մեր որ յերկինս ես, սքանչելի։
Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք։
Մէկ Ողջոյն, և մէկ Հայր մեր յերկինք աստացուք առ սքանչելի Հայրն Ներսէս, որպէս զի պահեսցէ զմեզ 'ի ժանտամահէն։

Հայր մեր։ Ողջոյն քեզ։

Մէկ

Մէկ Աղջոյն, և մէկ Հայր մեր յերկինք
ասասցուք առ սքի Հայր Ընտոն պատ-
ուհացին, որպէսզի պահեսցէ զմեզ յամ
պատահարաց չարաց:

Հայր մեր որ յերկինս ես, սքի եղիցի:
Աղջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք:
Մէկ Աղջոյն, և մէկ Հայր մեր յերկինք
ասասցուք առ սքի Մինքայէլ հրեշտա-
կապետն, և առ սքի Հայրն Յովսէփ,
որպէսզի ընկալցին զմեր զբարի մահ,
և զբարի վախճան:

Հայր մեր որ յերկինս ես, սքի եղիցի:
Աղջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք:
Մէկ Աղջոյն, և մէկ Հայր մեր յերկինք
ասասցուք զամ հոգւոց քաւարանին:

Հայր մեր որ յերկինս ես, սքի եղիցի:
Աղջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք:
Մէկ Աղջոյն, և մէկ Հայր մեր յերկինք
ասասցուք զամն հոգւոց ծնողաց մերոց,
հաջց, և մարց, եղբարց, և քեռց, և
ամ ազգականաց:

Հայր մեր որ յերկինս ես, սքի եղիցի:
Աղջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք:
Ա- ապա ասա՝ Ի խորոց կարդացի

Ի

Ի խորոց կարդացի առ քեզ Տէր, Տէր լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ՝ի լսել զձայն աղաղթից իմոց։

Եթէ զանօրէնութիւնս քննես Տէր. Տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի ՝ի քէն է քաւութի։

Վասն անուան քո համբերի Տէր. համբեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ՝ի Տէր։

Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ. ՝ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ՝ի Տէր։

Ի նոնէ է ողորմութիւն բազում, և ՝ի նմանէ է փրկութիւն. և նա փրկեաց զԻսրայէլ յամենեցուն նոր։

Փառք Հօր։ Այժմ և միշտ։

Օ՜ Հանգիստ յաւիտենական պարգևեա՛ նց Տէր։

Եւ լոյս մշտնջենաւոր ծագեսցի ՝ի նոսա։

Հանգիցեն ՝ի խաղաղութիւն. Ամէն։

Պարիսամ կոյս, և մայր շնորհաց, և շնորհալի մայր գթութեանց. ՝ի ժամ մահուան

ուան ընկալ զմեզ, և պաշտպանեա
'ի թշնամեաց: Երէց՝ կրկնէ՝ :
Աբ կամին կուսին, Ընդ ին արիւն Յեսին,
Միջնորդ լինիցին. Մեղք մեր ջնջ-
ջեսցին. Երէց՝ կրկնէ՝ :
Յե, Մարիամ, և Հայր Յոսէփ, ըզ-
սիրտս և զհոգիս և զմարմինս իմ ձեզ
յանձն առնեմ: Երէց՝ կրկնէ՝ Բ՝ ողջ-
ուն պիտ-ըծդ :
Տէր Ած, աշխարհիս խաղաղութի պարգևեա՝. Ամէն :
Հիւանդաց առողջութիւն պարգևեա՝. Ամէն :
Ներելոց հանգստութիւն պարգևեա՝. Ամէն :
Նաւելոց նաւահանգիստ պարգևեա՝. Ամէն :
Բանտարկելոց ազատութիւն պարգևեա՝. Ամէն :
Ծագաւորաց քրիստոնէից սէր և միաբանութիւն պարգևեա՝. Ամէն :
Սրբոյ եկեղեցւոյ բարձրացումն պարգևեա՝. Ամէն :
'Ի քաւարանի եղեալ հոգւոց ազատութիւն պարգևեա՝. Ամէն :

Ի՛ Լուսաւորչէ տաւ.

Փառք քեզ Տէր Աստուած մեր. որ պարգևեցեր զօրս բարեաւ և խաղաղութիւն անցուցանել։ Անարգասէր Աստուած՝ զառաջակայ գիշերս՝ որ ՝ի վերս մեր գալոց է, ՝ի մեղաց փրկեա՝ ՝ի չարեաց ազատեա՝ ՝ի գործս բարիս առաջնորդեա։ Ուսուցու օրհնութիւնս և փառաբանութիւնս արժանի արա զամ հաւատացեալս անուանդ քումդ սիրոյ, և պահեա՝ ՝ի խաղաղութիւն։ Տէր Աստուած մեր, տուր զքո խաղաղութիւնդ ամ աշխարհի. բարձ զցասումն և զպատուհասն՝ ՝ի յարարածոց։ Ողորմեա՝ հարց և եղբարց մերոց կենդանեաց և հանգուցելոց։ Ողորմեա՝ զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուութիւն, սպասաւորաց. և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սքի տաճարիս են հանգուցեալ։

Տէր Աստուած, օգնեա՝ թագաւորաց քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին, պահելով ՝ի խաղաղութիւն։

Տէր

Տէր Աստուած մեր, պահեա զառաջնորդս և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխառով 'ի կամս ողորմութեան քոյ։ Հաշտեաւ սէր և պատուական խաչիւ քո հալածեա զերևելի և զանտեսանելի թշնամին 'ի սահմանաց մերոց, և 'ի բնակութենէս մերմէ։ Փրկեա զմեզ 'ի հրոյն յաւիտենից։ Եւ քեզ փառք յաւիտեանս. Ամէն։

Փառք Հօր և Որդւոյ և։
Ամէն և միշտ և յաւիտ։

Օրհնեալք եղերուք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն. հանդերձուք խաղաղութիւն. և ամէն եղիցի ընդ ամենեսեանսդ։
Ամէն։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
С.С.Р.А. Щоличная библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ